

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԳՁԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԳՁԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

21 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՈՒՆԱՐՉԱՆՆԵՐԸ

ԺՈՐԵՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՄԻՍԻԱՆԻ ԳԱՄԲԱՐԱՆԸ

(Մ.թ.ա. I դարի երկրորդ կես)



300 (1/17 925)
200 28

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РА
ԱՄՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ ԻՐԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԱՐԽԵՕԼՈԳԻՇԵՍԿԻԷ ՔԱՄԱՏԻՔԻ ԱՐՄԵՆԻԱ
ԳՐԱԴԱՐԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԻ ԿՐԻՏԻԿԱԿԱՆ ԿՐԻՏԻՔԻ ԱՐՄԵՆԻԱ

ՀՈՐԵՐ ԿՄԱՏՐՈՒ
15

ԳՐՈՒՄԸՆԱ ՏԻՏԻԱՆԱ
(ՎԵՐԱԿԱՆՈՎՈՒՄԻՆ 18 20 11.2)

ՄԵԿՐԱԿԱՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԿԵՆՏՐՈՆ

ԱՐԽԵՕԼՈԳԻՇԵՍԿԻ ԿՐԻՏԻՔԻ ԱՐՄԵՆԻԱ
NATIONAL ACADEMY OF SCIENCES OF THE REPUBLIC OF ARMENIA
INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY
(ԱՐԽԵՕԼՈԳԻՇԻՔԻ ԿՐԻՏԻՔԻ ԱՐՄԵՆԻԱ)
THE ARCHAEOLOGICAL MONUMENTS AND
SPECIMENS OF ARMENIA

21

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

THE SCIENCE CENTER
SECOND HALF OF THE 19TH CENTURY



ՀՀ գիտությունների ազգային սպորտսիստեմի
ՀԱՅԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱՐՈՒԹՅԱՆ ԻՆՏԻՏՈՒՏ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՊԳԻՏԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

21

ԺՈՐԵՍ ԽԱՇԱՏՐՅԱՆ

ՍԻՍԻԱՆԻ ԴԱՄԲԱՐԱՆԸ

(Մ.թ.ա. I դարի երկրորդ կես)

ԵՐԵՎԱՆ

ՀՀ ՉԳԱ «Գիտություն» հրատարակչություն
2009

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РА

ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

АРХЕОЛОГИЧЕСКИЕ ПАМЯТНИКИ АРМЕНИИ

21

ЖОРЕС ХАЧАТРЯН

ГРОБНИЦА СИСИАНА

(ВТОРАЯ ПОЛОВИНА I В. ДО Н. Э.)

Ереван

Издательство "Гитутюн" НАН РА
2009

NATIONAL ACADEMY OF SCIENCES OF THE REPUBLIC OF ARMENIA
INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

THE ARCHAEOLOGICAL MONUMENTS AND
SPECIMENS OF ARMENIA

21

ZHORES KHACHATRYAN

THE TOMB OF SISIAN

(SECOND HALF OF THE 1st CENTURY B.C.)

Yerevan

NAS RA "Gitutyun" Publishing House
2009

ՀՏԴ 941(479. 25): 902/ 904

ՊՄԴ 63.3(2 Յ) +63.4

և - 282

Փիրքը հրատարակության է երաշխավորել
ԳԱԱ հնագիտության և ազգագրության
ինստիտուտի գիտական խորհուրդը

Պատասխանատու խմբագիր՝
պատմական գիտությունների բեկնածու
Ի.Ա.Կարապետյան

Գրախոսներ՝ պատմական գիտությունների
բեկնածուներ Ե. Գ. Հակոբյան, Ա. Ֆ. Նախչաբարյան

հայադրյալան ժողով

և - 282 Սիսիանի դամբարանը (մ.թ.ա. I դարի երկրորդ կես) - եր.: «Գիտություն» ՀՀ ԳԱԱ,
2009.- 124 էջ:


Աշխատությունը նվիրված է Սիսիանում պատահաբար բացված (մ.թ.ա. I դարի երկրորդ
կես) վերնախախն պատկանող դամբարանի նարտարապետության, քարձան ծխակատա-
րության մեզ հասած նյութերի ուսումնասիրությանը: Ցույց է տրված եզակի այդ դամբարանի
նշանակությունը Հայաստանի հելլենիստական մշակույթի ուսումնասիրության համար, վեր-
նախալի հակումներն ու ճաշակը:

Աշխատանքը նախատեսված է հնագետների, ազգագրագետների, պատմաբանների ու
արվեստագետների համար:

ISBN 978-5-8080-776-5

ՊՄԴ 63.3 (2 Յ) + 63.4

© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2009
© ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, 2009



ՊԵՂՈՒՄՆԵՐԻ ՊԱՏՈՒԹՅՈՒՆԸ

1970թ. նոյեմբերի 29-ին Սիսիան ավանի Շարստան (բաղաբաստեղի) կոչվող վայրում՝
«Ձուհաբրության» բլրի մոտ, որտեղ պահպանվում են հին պարիսպների և շենքերի հիմնա-
պատերի հետքեր, տուն կառուցելու համար հիմքեր փորելիս բացվում է մի դամբարան: Փո-
րողները, նկատելով դամբարանի ծածկի սրբատաշ սալերը, բացված հուշարձանի մասին
անմիջապես համապատասխան մարմիններին հայտնելու փոխարեն, ջարդում են դրանք,
անցք բացում և մտնում ներս: Հանելով մի քանի ոսկե զարդեր, արծաթե քասեր, կախույրի
բրոնզե և երկաթե մեծ քանակությամբ մասեր, պղնձե և կալե անոթներ՝ խառնիխուռն (ցնում
են պարկի մեջ և քայքայում:

Ղամբարանի բացվելը հայտնի է դառնում իշխանության տեղական մարմիններին:
Երջանային դատախազության և ոստիկանության համատեղ գործողությունների շնորհիվ իր-
երի մի մասը վերադարձվում է: Բացված դամբարանի մասին հայտնվում է Հայկական ՍՍՀ
Գիտությունների ակադեմիայի հնագիտության ինստիտուտ և Հայաստանի պատմության
քանդախան:

Պեղումների 2-ի վաղ առաջնություն մենք արդեն Սիսիանում էինք: Ծանոթանալով դամ-
բարանից հանված նյութերին՝ նկատեցինք, որ դրանք մեջ կան բազմոցի կամ մախիճի բրոնզե
ոտքեր և այլ մասեր՝ երկաթե և փայտե միջուկով, բրոնզե աշտանակի արծաթե քասեր, արծ-
վանիչ մեղալիւններ, կնոջ գլխիկ՝ դարձյալ արծաթից, գալվազանի ոսկե գլխիկ (որը սխալ-
մամբ քաջի մաս էր համարվել), երեք ոսկե ապարանջան, որոնցից մեկն աղյուծազուխ (որը
ջարդել, բաժանել էին երկու մասի), ոսկե մատանի, կրծքազարդի երկու կախիկ, պղնձե կաթ-
սա, կալե անոթներ և մատանիների ակեր՝ քարերից ու ապակուց: Այս նյութերին ծանոթանա-
լուց հետո շրջանային կազմակերպությունների օժանդակությամբ ձեռնամուխ եղանք հու-
շարձանի պեղումներին:

Մինչև դամբարանի ներսի ուսումնասիրությունը սկսելը, պեղումներ կատարվեցին նրա
վերին հարթակում:

Ղամբարանը ծածկված էր լավ մշակված երեք կրաքարե սալերով, որոնց վրա նստած
էր հողի և մոխրի հաստ շերտ, իսկ սալերի շուրջը, մանալանդ արևելյան և հյուսիսային հատ-
վածներում, չափավոր էին մեծ չափերի հում աղյուսներ: Սալերի և աղյուսների շուրջ՝ բալա-
կանաչակի ընդարձակ տարածության վրա, 13-25սմ հաստությամբ մոխրաշերտ էր, մեջը՝ մեծ
քանակությամբ կալե փոքր կարասների, կճուճների, սափորների և այլ անոթների բեկորներ:

Դամբարանում պահպանված էր կավե թոճած դագաղը (սարկոֆագ), երկարությունը՝ 1.15մ, կամրությունը՝ 57սմ, խորությունը՝ 60սմ, զարդարված պարանանձ երեք ուռուցիկ գոտիներով: Դագաղի կափարիչը երկարուկ է, տաշտան, 14.5սմ խորությամբ:

Ներսում պեղումներ կատարելիս (պեղող հնագետ՝ Ժ.Նաչատրյան), պարզվեց, որ փոքրուկ ժամանակ նրա մեջ քափվել էին զգալի քանակությամբ հող և քարի ցարդոն: Թեև գանձախույզները խառնել էին դամբարանի ներսում եղած հողը, այնուամենայնիվ նախնական հողաշերտի ստորին մասը պահպանվել էր, և հնարավոր դարձավ պարզել մի շարք իրերի սկզբնական տեղադրությունն ու դասավորությունը:

Պեղումներով հայտնաբերվեցին մածոյի և գափույցի առանձին մասեր, դաշույններ, նի-գակի ծայրեր, նետասլացներ, դանակներ, կավե անոթների բեկորներ, ոսկե զարդեր (գավազանի զխիկ, երեք մատանի, ակնաքցող, կրծքավարի յոթ կախիկ և այլն), կապարանման նյութից պատրաստված տղամարդու գլխաքանդակ, մատանիների ակեր, մեծ բվով ուլունք-երի՝ տարբեր գույնի ու տեսակի քարերից, ասպակե մածուկից, մետաղե կոճակներ, քարե կնիք՝ զինվորի և արջի պատկերներով, մեկ ոսկե և 14 արծաթե դրամներ:

Մեր խորին շնորհակալություն ենք հայտնում Միսիանի շրջանային կզամակերպու-թյուններին և նրանց բազմաթիվ աշխատակիցներին անհետացած նյութերի որոնման ու հայտնաբերման, ինչպես նաև պեղումներ կատարելու ընթացքում ցուցաբերած անզնախ-տելի օգնության համար:

Ուսումնասիրությունից պարզվեց, որ բացվել է իշխանական դամբարան՝ կառուցված մեզանց 2000 տարի առաջ: Իր կառուցվածքով այս դամբարանը մի ուշագրավ հուշարձան է: Որս վերին հարթակում վառված հուճ աղյուսների և ընդարձակ տարածություն բռնող հսկա մոխրաշերտի ավալայությունը՝ մեծ քանակությամբ խեցեղեն բեկորներով, թերևս վկայում է, որ դամբարանում թաղումները կատարվել են դիակիզման ծիսական արարողությամբ:

Չի քաջատվում, որ դամբարան-հուշարձանն ունեցել է նաև զոհաբերության արարողու-թյունների կամ սրբավայրի նշանակություն: Դամբարանի ներսում գտնվեցին ոսկորների ան-ընշան մնացորդներ և մարդու մեկ ատամ: Ըստ դամբարանային նյութերի՝ այստեղ թաղված են եղել տղամարդ և կին: Նախնական այս դիտարկումները պետք է ճշգրտվեն նյութերի հետա-գա ուսումնասիրությամբ:

Մի բան պարզ էր, որ բացվել է երկհազարամյա հնության դամբարանային նշանավոր հուշարձան՝ զիտական մեծ արժեք ներկայացնող առատ նյութերով, արվեստի աչքի զարնող գտածոներով: Արծաթե քասերից մեկը մաքրելիս երևաց արաններեն արձանագրություն:

Դամբարանի հայտնաբերումը Միսիանում, որքան պատահական, նույնքան և բացառ-տելի է: Միսիանը հնագույն ժամանակներից եղել է Մյունիքի իշխանների նստավայրը, և բնա-կանաբար այստեղ պետք է գտնվեին նրանց պալատական, պաշտամունքային կառույցները, կավձածրերը, ինչպես և դամբարանները: «Ձոհաբերության» կոչվող բլուրը զենելիս հայտ-նաբերվեցին կավե կարանների և այլ անոթների բեկորներ, որոնցից մի բանիսը, անշուշտ, հասակակից էին դամբարանին, իսկ մյուսներն ավելի ուշ ժամանակների էին: Միսիանը եղել է

քաղաքատիպ բնակավայր, ուստի նրա ավերակների վայրը հետագայում կարող էր (քաղաք-ատեղի) կոչվել: «Ձոհաբերության» բլրից և բացված դամբարանից շուրջ 300մ դեպի հարավ-արևելք՝ «Շարստանում», եղել է և մի եկեղեցի, որի ավերակներում հայտնաբերված կրճիմդրներից դատելով՝ կարելի է ասել, այն կառուցվել է VII դարից ոչ ուշ: Միսիան ավանի հյուսիսարևմտյան ծայրում մինչ օրս կանգուն է VII դարի եկեղեցական առավել նշանավոր կառույցներից մեկը՝ Ա. Գովհաննես եկեղեցին, Ստեփանոս Օրբելյանն իր «Պատմություն նախնազին Սիսական» աշխատության մեջ դրվատելով Մյունի վանքի «չքնաղ, նորակերտ ձևով կառուցված գմբեթաձև եկեղեցին», այն կոչում է և Ա. Գրիգոր (այժմ տեղացիներն անվանում են սբ. Գովհաննես): Եկեղեցուց ոչ հեռու Մյունյաց իշխանների կառուցել էին «Տուև արքունի և ապաստանք իշխանանիտս»,- շարունակում է պատմիչը:

Նորահայտ դամբարանը լրացնում է Միսիան ավանի աչքի ընկնող հուշարձանների շարքը, միաժամանակ վկայում է տեղում, մանավանդ «Ձոհաբերության» բլրի վրա և Շարս-տանում պեղումներ ձեռնարկելու, բացված հուշարձաններն անաղարտ ու խնամքով պահ-պանելու անհրաժեշտության մասին:

ՂԱՏԱՐԱՆԻ ՀԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Պեղումները պարզեցին, որ դամբարանը ստորգետնյա սրբատաշ տարբեր երկարության, 20-23սմ հաստության կրաքարե սալերով կանոնավոր և իջքնատիպ շարվածքով կառուցված է (առ. 1-3)՝ ուղղանկյուն հատակագծով, ներքի չափերն են 2.10X1.80 մ, բարձր. 1.66 մ (չափազորությունը կատարել է Միսիան ավանի ճարտարապետ Մ. Դանիելյանը): Պատերը որված են նախապես պատրաստված սպասառակի վրա: Մուտքը (74X69սմ) արևմտյան կողմում է՝ հարավային պատին կից, փակված ավելի փոքրապիս քարերով: Դրանք, ըստ անհրաժեշտության, կարող էին հանվել և նորից տեղադրվել: Արևելյան և արևմտյան պատերի քարերը՝ չորրորդից մինչև յոթերորդ շարքը, 4 - 20 սմ առաջ դնելու հետևանքով դամբարանի վերին մասն աստիճանաբար նեղանում է մինչև 65 սմ և փակվում լավ մշակված 150X70X24 սմ չափերի երեք սալերով (առ. 1, II, 1): Սալերի վրա հոււմ աղյուսներով (63X49X20 սմ) պատրաստված է մոտ 25մ² մակերեսով հարթակ, որի վրա բացված երկու խարխիս (առ. 1):

Դայաստանում «կեղծ քաղով» դամբարանները հանդես են գալիս մ.թ.ա. II հազարամյակում և հարավում են մինչև մ.թ.ա. VI դարը: Ըստ որում, հանդիպում են երկու, երեք և չորս կողմից աստիճանաձև նեղացող ծածկով դամբարաններ: Այդպիսի դամբարաններ հայտնաբերվել են Օշակյանում,¹ Սևանի ավազանում, Արագածի լանջերին, Լոռիում,² Միսիանի տարածքում, Իշխանասարում և այլուր: Չվականի տները («Օղուգի տներ»), ինչպես ժողովուրդն է անվանում, կառուցված են հսկայական քարերով, առանց շաղախի. դրանք, երեք կողմից (իսկ դրոմենները, որոնք երկարավուն են՝ երկու կողմից) աստիճանաձև նեղանալով, ծածկվում են հսկայական սալերով: Քարերի տեղադրման պատճառով հնարավոր չէր ուղիղ անկյուններ ստանալ. ուստի ստացվում է կանարձև.³

Հանձնատարար ավելի կանոնավոր շարվածք ունեն Լոռիում պեղումներով բացված, միջին բրոնզի շրջանին վերաբերող № 1 և № 6 դամբարանները: Դրանք ուղղանկյուն են, պատերը շարված են անձնակ, բայց կանոնավոր ձևեր ունեցող մեծ սալերով: Առաջինի երկերն են՝ հատակագծում 6.70x2.92մ, բարձր. 2.60մ, երկրորդին՝ 5.50x3մ, բարձր. 3մ: Երկու դամբարանների պատերն էլ, որոնք բաղկացած են յոթ շարքից, սկսած երկրորդից, երկայն-

քով, երկու կողմից աստիճանաձև նեղանում են մինչև 1.55մ և ծածկվում հսկա սալերով:⁴ Կամոյի շրջանի Կարմիր գյուղում բացված ուրարտական մ.թ.ա. VII դարի դամբարանը ուղղանկյուն հատակագծով ծածկված է անկյուններում ծակած, աստիճանաձև նեղացող կրպիտ քարերով:

Ենթադրվում է, որ «կեղծ քաղը» հայկական ճարտարապետության մեջ լայնորեն կիրառվող գլխատների ու հազարաչենների գմբեթավոր փայտե ծածկերի նախատիպն է:⁵ Վերջիններս իրականացվում էին այնպես, ինչպես Կարմիր գյուղի վերոհիշյալ ուրարտական դամբարանը: Հազարաչեն ծածկերի հնագույն օրինակներ հանդիպում են և Կարմիր բլուրի մինչուրարտական բնակավայրում:⁶

Աստիճանաձև նեղացող ծածկով քարաչեն, աղյուսաչեն դամբարաններ հայտնի են նաև Հին աշխարհի տարբեր երկրներում: Եգիպտոս (II դինաստիա), Սաբի, Ուր (III հազ.), Քիչ՝ վաղ դինաստիական շրջան,⁷ Միջու կղզի⁸ (վիկուլայան դամբարաններ) և այլուր:

Ճանի այդ ձևը շատ տարածված է եղել նաև հունական աշխարհում՝ Փոքր Ասիա, Թրակիա, տուրոիա, հատկապես Հյուսիսային-մերձսևծովյան շրջաններում⁹, որտեղ այդ կառուցվածքը կատարելության է հասցված: Բուսիդոնում դրանք հանդես են գալիս մ.թ.ա. V դարի վերջերին ասավել զարգացած ձևերով, իսկ IV դարում Պանտիկասպիում ու նրա շրջակայքում դառնում են ամենատարածված ձևերից մեկը և հարևանում մինչև մ.թ. I դարը:¹⁰ Վերջիպում են երկու, երեք և չորս կողմից նեղացող, աստիճանաձև ծածկերով դամբարաններ: Վերջինս փայլուն օրինակներից է Կերչի մոտ բացված «բազալիդական կուրգանը»:

Բուսիդոնում դրանք հանդես գալու մասին կա երկու տեսակետ: Մտաչին, որ դրանք հանարվում են այսպես կոչված Եգիպտե թղունների¹¹ (Արեոսի դամբարան) հետագա զարգացումը, իսկ Թրոսները լայնորեն տարածված էին Հունաստանում մ.թ.ա. II հազարամյակի կեսերից մինչև IX-VIIIդդ.: Հունաստանում այդ շրջանում փորձեր են կատարվել կառուցելու նաև աստիճանաձև ծածկով ուղղանկյունաձև դամբարաններ, բայց տարածում չեն ստացել: Միջինյան թղունների սկզբունքները շարունակվեցին տուրոիայում և Փոքր Ասիայում մ.թ.ա. VII-VIIIդդ., այսինքն՝ մինչև Թրակիայում դրանց հանդես գալը: Ենթադրվում է, որ այդ ավանդույթը Բուսիդոն է անցել Թրակիայից և Փոքր Ասիայից,¹² որոնց հետ Բուսիդոնյան բազալիդու-

¹ *Մ. Դանիելյան*, Լոռի քերից է 2 դամբարանը, ՊՊԲ, 1972, № 2, էջ 267, նկ. 1: *Ս.Գ. Դավթյան*, ՄԱԿ, 1920, № 19, 20, 23, 24, ըստ 3.

² *Ս.Վ. Կարապետյան*, Ազարաշեն և դրա նշանակությունը արևմտյան արևելքում, Երևան, 1961, № 6, ս. 7.

³ *Ա.Ա. Կարապետյան*, Գործ Կեղծաքարեր, Երևան, 1961, № 25, 30, ըստ 9, 6.

⁴ *Գ. Կեղևյան*, Древнейший Восток в свете новых раскопок, М., 1956, с. 144, 223, 229, 233, 237. Всеобщая история архитектуры в 12 томах, Архитектура Древнего мира, 1, М., 1970, с. 199, 202.

⁵ *Գ. Կեղևյան*, У истоков европейской цивилизации, М., 1952, с. 86, ըստ 25.

⁶ *Մ. Մոստովցև*, Английская декоративная живопись на Юге России, СПб., 1914, с. 109 и сл.; *В. Գ. Գալստյան*, Боспорское царство, М.-А., 1949, с. 245-274; Его же, Боспорские города, Уступчатые скелы, Эллинистическая усадьба, Изурат, М.-А., 1981, с. 6-52; *Վ. Բ. Եվանտովսկի*, О происхождении боспорских скелов с уступчатыми перекрытиями, СА, 1955, № XXIV, с. 29-53; *Ա.Մ. Կարապետյան*, «ԱՐՄԴ», М.-Ա., 1955, с. 204-214;

⁷ *Ս. Գալստյան*, *Գ. Կեղևյան*, Трехсотлетняя гробница при «Митриде»-Археологический, № 2, 1973, с. 15-29; *В. Գ. Գալստյան* և *Յ.Տ. Կյուրյան*, Скелы с уступчатыми перекрытиями в районе царского кургана близ Керчи, МИА, № 69, 1959, с. 251-254; *Ը. Տ. Կարապետյան*, Трихотомные курганы в районе Тобякского озера, «Антиния истории и культуры Средиземноморья и Причерноморья», А., 1968, с. 178-188.

⁸ *Մ. Մոստովցև*, ՄԱԿ, 1920, № 19 և ս. 148.

⁹ Խաչակարները շրջանաձև կառուցվածք ունեցող շինություններ:

¹² *Վ. Գ. Գալստյան*, Боспорское царство, с. 262-265, его же, Боспорские города, с. 50-52; БИА, с. 184, ըստ 35.

¹ *Ս.Ա. Եսայան*, Находки урартских изделий в Ошавянском могильнике. «Древний Восток и мировая культура», М., 1981, с. 94.

² *Ս.Գ. Դավթյան*, Լորի-Երզ, 1, Результаты раскопок 1969-1973гг., Еրևան, 1981, с. 19, 20, 24.

³ *Վ. Գալստյան* և *Յ. Տ. Կյուրյան*, Երկու խարխիսի հայկական ճարտարապետության պատմության, 1, երևան, 1942, էջ 378, նկ. 279, արվածքները 381-403:

թյունը սերտ կապերի մեջ էր: Երկրորդ կարծիքն այն է, որ այդ ավանդույթը ոչ մի կապ չունի Միկենյան քոլոսների հետ: Այն առաջացել է տեղական գեղերի մտտ գոյություն ունեցող, փայտե դամբարանների ձևերից, որ հունանեոտական վերնախավը շարունակել է մերձդարձական վրանման ծածկերով դամբարանների ավանդույթները՝ պարզապես փայտե կառուցվածքները փոխարինելով քարով:¹³

Վերոհիշյալ կարծիքներից առաջինն ավելի համոզիչ է քվում: Այդ ձևերն, արևելքում ավելի վաղ են հանդես գալիս, ուստի «կեղծ քարով» ծածկի ակունքները պետք է փնտրել այնտեղ: Շատ հավանական է, որ միկենյան քոլոսներն իրենք կրած լինեն Առաջավոր Ասիայում և Եգիպտոսում գոյություն ունեցած այդ տիպի ծածկերի ազդեցությունը, թեև բացառված չեն իրարից անկախ դրանց հանդես գալը և զարգանալը: Փոքր Ասիայում՝ խեթական¹⁴ աշխարհում (հաթուռաշ), Լիդիայում և այլուր,¹⁵ «կեղծ քարով» քարե և աղյուսե¹⁶ կառույցներ, դամբարաններ մ.թ.ա. II-I հազարամյակում հաճախ են հանդիպում: Ուշ շրջանի այդորհնակ կառույցներից ուշադրության արժանի են Անկարայից 40կմ դեպի արևմուտք գտնվող Կապապտուն¹⁷ 1933թ. բացված, չորս կողմից աստիճանաձև մեղացող «կեղծ քարով» դամբարանները («С»), որոնց միշտ ժամանակը որոշված էր: Վ.Ճ.Պայուրևիկին ներառում է, որ դրանց վերաբերում են հելլենիստական շրջանին:¹⁸

Ինչ վերաբերում է Հայկական լեռնաշխարհին, ապա վերոհիշյալ դամբարանները (մ.թ.ա. II հազարամյակից մինչև մ.թ.ա. VI դար) թույլ են տալիս ենթադրել, թե գործ ունենք ծածկի տյույն ձևի ստեղծման ու զարգացման առանձին կենտրոնի հետ: Կարելի է ենթադրել միայն, որ նման ծածկ ունեցել են Քսենոփոնի «Ամարասիսում» նկարազրկած (մ.թ.ա. V դարի վերջ) հայկական քրեակարանները,¹⁹ Պարսպամուս և Անգեղ տուն գավառում քարված հայ քազավորների²⁰ և Երզրումի երկաթուղու շինարարության ժամանակ՝ 1917թ., Հասան-Ղայալում բացված հելլենիստական դարաշրջանների դամբարանները:²¹ Հնգաշենքերին չի հաջողվել դրանք տեսնել կանգուն վիճակում, որովհետև շրջակայքի քրեակիչները քանդել և տարել էին քարերը: Պահպանվել էին միայն սալահատակը և պատերի առաջին շարքի քարերի մի մասը: Պատերը չարված են եղել քաջ մոխրագույն, մոտ 0.5մ բարձրությամբ սրբատաշ սալերից, առանց չաղախի, միայն անկյունային քարերն են միացվել ծծմեռակալաշ կապերով: Սալարկղը, որը գտնվում էր դամբարանի սալահատակի վրա,

չարված էր ճույն քարերով (երկ. 2ձ, լայն. 1.5ձ): Բացելիս դամբարանը կանգուն է եղել, սակայն փայտե ծածկի հետքեր չեն նկատվել:

Երկրորդ դամբարանաբարի պեղումները պատերազմի պատճառով չեն ավարտվել: Սակայն պեղումների ղեկավար Ս.Վ.Տեր-Ավետիսյանի կարծիքով երկու դամբարանաբարուները իրար նման են, վերաբերում են մ.թ.ա. III-IV դ. և կրում են հելլենիստական մշակույթի անհայտ ազդեցությունը:²²

Ուշ հելլենիստական Հայաստանում «կեղծ քարը» օգտագործել են ոչ միայն քարե, փայտե, այլև հուն արյուսե կառուցվածքներում: Արյուսաշար նմանատիպ դամբարաններ են հայտնաբերվել պատմական Հայաստանի Եակաշեն (Սակաշեն) գավառում²³ (վերաբերում են մ.թ.ա. և մ.թ. I դարերին):²⁴

Ենթադրվում է, որ Փարաքարի աշտարական շինությունը ևս ունեցել է «կեղծ քար»:²⁵ Սակայն նրա աշտարական ժուռ շինությունների ինչ լինելը²⁶ և ծածկի հարցը փնտելի են: Այսպիսով, մենք տեսնում ենք «կեղծ քարով» ծածկի ավանդույթների շարունակական գոյատևում Հայկական լեռնաշխարհում մ.թ.ա. II հազարամյակի կեսերից մինչև մեր օրերը: Ենթադրվում էր, որ Միսիանի դամբարանն ունեցել է նաև վերգծման կառույց,²⁷ մինչդեռ, ինչպես վերը տեսանք, երկրորդ հարկ չի ունեցել: Հայտնաբերված խարխիսները որևէ կապ չունեն շինության հետ, դրանք ծառայել են իբրև գիտատեսչանք, որովհետև. ա) հաստատված խարխիսներից մեկը կրաքարից է, մյուսը՝ բազալտից. բ) ործաքարն խարխիսի վերնամասը կրաքարից ստացած է. գ) դրանք թեև գտնվել են իրենց նախնական տեղում (in situ), բայց դամբարանի և միջանց նկատմամբ սիմետրիկ չեն դասավորված. դ) դամբարանի վրայի արյուսաշարի հարթակը գրեթե անվստահ էր, և վերջնական այլ կառույթի հետքեր չեն նկատվել. ե) «կեղծ քարով» ծածկված հայտնի դամբարաններից և ոչ մեկը (Փոքր Ասիա, Թրակիա, Բուսիոթ կամ Էսթուրիա), երկրորդ հարկ, այսինքն՝ վերգծման կառույց չեն ունեցել: Խարխիսներն իբրև գիտատեսչանք օգտագործելու փաստն ու սովորույթը յայդորեն տարածված են եղել Արտաշատի ուշ հելլենիստական և մ.թ. առաջին դարերի դիակիզմով կառուրված քարումներում:

Մ.թ.ա. III-IV դ., երբ Հայաստանի կապերը ավելի սերտացան հելլենիստական աշխարհի հետ, հայկական մշակույթը, այդ թվում շինարվեստը, կոչոցն հելլենիստական մշակույթի բարերար ազդեցությունը: Թաղման ձևերի մեջ մուտք գործեցին հելլենիստական տարրեր, «կեղծ քարով» դամբարաններն ավելի կատարելագործվեցին:

¹³ *Д. Блаватский*. О происхождении Боспорских склепов с усугубляемыми перекрестиями—CA, XXIV, 1956, с. 37-38.

¹⁴ ВИА, с. 242, рuc. 25; E.Akurgal, Die kunst der Hethiter, München, 1961, Abb. 73. E.Klengel und H. Klengel, Die Hethiter und ihre Nachbarn. Eine kulturgeschichtliche kleinasien von Catal Hüyük bis zu Alexander dem Grossen, Leipzig, Koehler, Amelang, 1970, Abb. 30.

¹⁵ *Տ.Ա.Կալաբան*. Об усугубляемых склепах Боспора.—Сообщения Института истории и теории архителтуры АН СССР, № 6, 1947, с. 22-23; *В.Ф.Гадляковский*. Боспорские городки, с. 51; ВИА, с. 251, рuc. 42.

¹⁶ *de Morgan*. Recherches archéologiques, Fouilles à Susse—Paris, 1896, vol. I, s. 114.

¹⁷ Remzi Oğuz Ark et J.Courpy. Les tumus de Karabel et la sépulture du roi Déiokatos II.—“Revue archéologique”, 1935, T. VI, Juillet-décembre, p. 136-140, fig. 4.

¹⁸ *В.Ф.Гадляковский*. Боспорское царство, с. 527, рuc. 64.

¹⁹ Xen. Anab., IV, 25.

²⁰ Սովիտիկ Խրեթեանցու Պատմութիւն Հայոց. Տփղիս, 1913, գ. III, իր: *Փայտուտ Քիլանը*, Պատմութիւն Հայոց. Վնեճիկ, 1832, դար. IV, 24.

²¹ *Շ.Ե.Գրգուսյան*. Курганы Хасан-Калы.—Известия Кавказского историко-этнографического института, том IV, Тифлис, 1926, с. 73-76, рuc. 1.

²² Լույս տրվում էր, 84.

²³ Այժմիս Կիրովաբադից հարավ՝ հայկար տաճոկ ճանապարհին:

²⁴ *Յ.Գ.Մանուկյան*. Саркофаги гробницы Азербайджана и их датировка—CA, 1940, рuc. 107, 108, 109, 110, 111, 112, 113, 114, 115, 116, 117, 118, 119, 120, 121, 122, 123, 124, 125, 126, 127, 128, 129, 130, 131, 132, 133, 134, 135, 136, 137, 138, 139, 140, 141, 142, 143, 144, 145, 146, 147, 148, 149, 150, 151, 152, 153, 154, 155, 156, 157, 158, 159, 160, 161, 162, 163, 164, 165, 166, 167, 168, 169, 170, № 1, էջ 238:

²⁵ *Շ.Շ.Առաքելյան*. Композиция двухрусных мавританских в армянском раннесредневековом зодчестве, ИФЖ, 1976, № 4, с. 215.

²⁶ *Վ.Տիգրանյան*, Փարաքարի աշտարական դամբարանը և նման հուշարձաններ Հայաստանում և Առաջավոր Ասիայում, ՄԵԴ, 1970, № 1, էջ 238:

²⁷ *Շ.Շ.Առաքելյան*. Եվզ, աշխ., էջ 216:

ՔԱՂԱՍ ԾԵՆՔ

Միսիանի դամբարանը Հայաստանի ուշ հելլենիստական շրջանի թաղման ծեսերի՝ դիակիզման, թաղման կրակի շուրջը կատարված հոգեհացի, գոհաբերության և հեղձան արարողությունների մասին լավագույնս պատկերացում տվող հուշարձաններից է:

Դամբարանի վրա չթրված խոշոր աղյուսներից (6.3x49x20) մոտ 25մ² մակերեսով հարթակ է պատրաստվել՝ դամբարանի ապահովության, փչացումից և օտար աչքից հեռու պահելու, ինչպես նաև վերոհիշյալ ծեսերը կատարելու համար (տր. 1):

Թաղումը կատարվել էր դիակիզման եղանակով, որից առաջացած մոխիրը լցվել էր դամբարանում տեղադրված կավե սարկոֆագի մեջ (երկ.՝ 115 սմ, լայն.՝ 57սմ, խոր.՝ 60սմ):

Դատելով վառված աղյուսներից՝ կրակը բավականին մեծածավալ և ուժեղ է եղել: Ինչպես խեցեղեն իրեր են վկայում, դիակիզման հետևանքներից հրկիզ են նաև արանակալի իրերի մի մասը՝ օձանեխիքի անոթներ և այլն: Այսինքն՝ նախքան դիակիզումը կատարել են վառումներ, մարմինն օձել անուշահոտ յուղերով, իսկ դատարկ անոթները դրել հեղը:

Դիակիզումն, իրև թաղման ծես, ընդունված է եղել Հին աշխարհի շատ ժողովուրդների կողմից՝ իսբեր, հույներ, հռոմեացիներ: Ուսումնասիրություններից զույգ են տալիս, որ դիակիզումը նորություն չէր և Հայաստանում: Հանդիպում է դեռևս վաղ և ուշբրոնզեդարյան, երկաթի և վաղ հայկական դարաշրջաններում: Այդպիսի թաղումներ պեղվել են Էջմիածնի շրջանի Շրեք բլուրում և Արվածքի շրջանի Էլար գյուղում:²⁸ Էլարի դամբարանների մի մասում դիակիզ են հենց գերեզմանափոսն, հետազոտողները մեծախից, իսկ մյուսներում գտնվել են այրված ոսկորներով, բրոնզե և երկաթե առարկաներով աճյունային սամիրներ: Դամբարանների պատերին նկատելի են օխի հետքեր: Հավանաբար այստեղ և դիակիզումը կատարվել է տեղում: Դիակիզմամբ դամբարաններ հայտնաբերվել են նաև Զվարթնոցի²⁹ շրջակայքում, Լոռիում, Ոսկեվազում, Սևանի ավազանում³⁰ և այլուր:

Ծովախուռն բացված դամբարաններն անտաշ թաղերով կառուցած ստորգետնյա կառույցներ են: Դրանց պատերի թաղերը սևացած են, որը տեղում դիակիզում իրականացնելու արդյունք է: Այստեղ այրված կմախքների հետ մեկտեղ հայտնաբերվել են բրոնզե և կավե իրեր: Դրանց մեջ կան և ընտանեկան (տղամարդու, կնոջ, երեխայի) թաղումներ: Երբեմն դիակիզի հետ այդը են նաև գոհաբերելի եզերք, ոչխարներ, ձիեր և այլն: Կան դամբարաններ, որոնք

ցածր միջնապատերով բաժանվում են երկու մասի:³¹

Դիակիզումը հատուկ է եղել նաև ուրարտացիներին: Ալթին-Յեփեի (Ոսկե բլուր) ստորգետնյա շքեղ բնակարանատիպ դամբարանների կողքին առկա են Նոր Արեշի և Մալաթիի դիակիզումով դամբարանները: Դրանք հանրուցային աճյունը պարունակող աճյունասփորոնք են ուրարտական տիպի (կարմրավուն) և դամբարանային պարագանային պարունակող կճուճներ, որոնք դրվել են հատուկ փորված (ինչպես Նոր Արեշի կղզումարիում) և քնակաճ փոսերի մեջ (Մալաթիում): Ժայռերի ճեղքերը վառվել են մանր թաղերով, իսկ աճյունասփորոնքը ծածկել տուփ սալաքարերով:³² Դիակիզումը կատարվել է տեղում: Այդ են վկայում իրերի վրա այրվածքի հետքերը:

Մ.թ.ա. VI-Vդդ. դիակիզումով հետաքրքիր կուրզան է պեղվել Շամշադինի շրջանի Գյուզու կղզկղ վայրում:³³ Հելլենիստական շրջանի դիակիզումով թաղումներ հայտնաբերվել են նաև Գառնիում և Արտասառում: Գառնիում դիակիզումը գույքի հետ կատարվել է տեղում: Կարասի մեջ:³⁴ Թաղման ծեսը դիակիզումով, հոգեհացով և գոհաբերություններով Արտասառի հարավարևելյան դամբարանաշարի բնորոշ ձևն է:

Այսօր դեկար է ճշգրիտ պատասխան տալ այն հարցին, են ինչու են այդը մահացածի դիակը: Այս առիվով մասնագետները տարբեր կարծիքներ են հայտնել: Հունաստանում դիակիզումը դրդապատճառներն ուսումնասիրող գիտնականները կարծում են, են այն արդյունք էր քրոլոթալան և ազգամեծ կյանքի ոչ բնականում պայմանների, որոշակի կրոնական աշխարհայացքի, նեխող մարմնի նկատմամբ ունեցած նողկանքի, հոգու երկյուղի, հոգուն օգնելու ցանկություն:³⁵

Հունս գոյություն են ունեցել թաղման բազմազան ձևեր: Սերվիուսը «Էնեյական» մասին տված բացատրություններում ասում է, են եզրպատկերները դիակը մշակում, մոմիա էին դարձնում, որպեսզի հոգին երկար ժամանակ չբաժանվի մարմնից, իսկ հոմեացիները, ընդհակառակը, վառում էին այն, որպեսզի հոգին արագորեն բաժանվեր մարմնից և շուտապես վերադառնար իր մայրական վիճակին:³⁶ Սակայն մարդկի աշխատես են ամեն կերպ իրենց ծանր վիճակն արտահայտել, նվիրավորություններ ու գոհաբերություններ կատարել, հնարավորինս հարապատկետ կացարաններ կառուցել, ուրիշ այլ միջոցներով սիրազանգի ներքոյալի հոգին, որպեսզի նա իրեն լավ զգա անըրշիթիման աշխարհում և կենդանի մարդկանց աշխարհի վերադառնալու ջանկարություն չունենա, չչարանա ու չվճառի նրանց: Միևնույն ժամանակ նրանք կարծում էին, են բարեկամական հարաբերություններ պահպանելով և մշտապես հոգ տանելով հանրուցային հոգու մասին: Կարող էին նրա թարապակամությունը շախել և օգուտ-

²⁸ **Եր. Լալայան.** Հուրարականության և գերեզմանների զարգացումը Հայաստանում, Տեղեկագիր գիտության և արվեստի ինստիտուտ, 1928, № 3, էջ 94 և հետ:

²⁹ **Մլեր Բալասանյան.** Հին Հայտարազարտի պեղումները, Երևան, 1931, էջ 44:

³⁰ **Եր. Լալայան.** Դամբարանների պեղումները Խորհրդային Հայաստանում, Երևան, 1931, էջ 110 և հետ:

³¹ **Եր. Լալայան.** Նոր Բայազետի գավառ կամ Գյուրաբունի. Ազգագրական հանգես, գ. 15, 1907, էջ 166-173, 175 և հետ:

³² **Մ. Արիբերդյան, Գ. Մնացականյան,** Նոր Արեշի ուրարտական կղզումարի, ՀՊՄԱ Ֆ. Տեղեկագիր, Երևան, 1958, № 10, էջ 63 և հետ: **Ֆ. Ա. Բրդլոն.** Урагитский колумбарий у колодезя Аратата в Куро-Араксинском энклаве, ВГМ, т. XIII, Ե. Երևան, 1943, с. 4 և հետ:

³³ **Ս. Ա. Եսայան.** Погребения VI-V вв. до н.э. в горах Шамшадина, СА, № 3, М., 1965, с. 229 և հետ:

³⁴ **Մ. Արիբերդյան.** Դիակիզումը Հայաստանում (մ.թ.ա. II-IV դդ.), ՀՊՄԱ Ար. 139, 1975, № 2, էջ 57-69:

³⁵ **Է. Բ. Կաստան.** Групповые некрополи Босфорских городов VI-V вв. до н.э. и местные их особенности, МИА, № 66, Москва-Ленинград, 1959, с. 271-273:

³⁶ **E. Rieu.** Psyche, Bd. I, Leipzig, 1898, էջ 30, ծան. 4.

Ներ տառնալ: Դրա համար էլ աշխատում էին կրակի միջոցով հնարավորինս արագ ոչնչացնել ճարմինը, որպեսզի կտրվել մեռյալի հոգին կենդանի աշխարհի հետ կապող թելը:

Հայաստանում դիակիզումը գոյատևում է մինչև քրիստոնեության ընդունումը, թեև նրա հետքերը վերապրուկային ձևով հարատևել են մինչև XXդ. սկզբները: Ըստ բաղձան ծնի՝ ածուխի կտորները և մոխրի մնացորդները համարվում էին կրակով չար ոգիների՝ վախեցնելու, նրանք փակցնելու, գերեզմանը նրանցից մաքրելու միջոց: Ինչպես նշեցինք, Սիսիանի և Արտաշատի դամբարաններում քարման արարողությունը կատարվել է քարման կրակի շուրջը, որն ուղեկցվել է զոհաբերություններով և հոգեհացով: Ուսումնասիրություններն ըստյ և այլու, որ Հայաստանում գոյություն են ունեցել զոհաբերության բոլոր ձևերը³⁷ Սևանի ավազանի դամբարաններում դիակիզի հետ միասին հայտնաբերված եզան, ծիրու և այլ կենդանիների վառված ոսկորները վկայում են, որ այստեղ անկա է քարման ծիսակատարության ժամանակ կատարված արյունոտ զոհաբերության ամենահին ձևը, երբ կենդանուն մորթելուց հետո ննջեցյալի հետ միասին ամբողջությամբ այրում էին: Այդպիսի զոհաբերություն է նկարագրում նաև Հոմերոսը³⁸ ըստ նրա՝ զոհաբերության ժամանակ նահապատկություն տրվում էր ցուլերին և խոյերին: Հայաստանում ևս եզը, ծին և խոյը եղել են զոհաբերության ամենահարգի կենդանիները:

Սիսիանի և Արտաշատի դամբարաններում ներկայացված է արյունոտ զոհաբերության ավելի ուշ ձևը, երբ կենդանուն մորթում էին զոհասեղանի վրա, միջը ուտում, իսկ մնացորդները կտորատած ամանեղենի հետ գցում կրակի մեջ կամ գերեզմանի վրա:

Լուկիանոսը Հարոնի բերանով պատմում է քարման արարողության ժամանակ մատուցված փաստիղի ճաշերի, զինու, մեղրի ու կաթի հեղձան մասին, երբ մեռածների հոգիները, թռչելով չոր կողմ, հագնեում էին զինու, յուղի, ծխի հոտից³⁹ ծխախոտի քարման ժամանակ կատարվող զոհաբերությունները՝ հոգեհաց, հեղուկներ և այլն, այնքան խոր արձանատի են ունեցել ժողովրդի մեջ, որ վերապրուկային ձևով շարունակվել են մինչև մեր օրերը:

Դիակիզումն, անշուշտ, տեղական էին ավանդույթների շարունակությունն է: Սակայն, և՛ դիակիզումը և՛ Հայաստանի հելլենիստական շրջանի ու մ.թ. I-IVդդ. քարման մյուս ձևերն ու մտնել որոշ ընդհանրություններ ունեն մերձավորարևելյան և այլ հելլենիստական երկրների քարման ծիսակարգի հետ: Այսպես, ընդհանուր էին կարասների և կպել սարկոֆագների մեջ քաղելու սովորությունը, հոգեհացի ժամանակ ամբողջի բղբլորները և սննդի մնացորդները քարման կրակի մեջ նետելը, ննջեցյալի բերանի կամ ձեռքում դրած, կպել արձանիկները, թռչել կամ քարն ձվեր⁴⁰ (Արտաշատ, Սիսիան, Դարոյնք)⁴¹ վեզեր դնելը և այլն:

Այդ ընդհանրություններն, ամենայն հավանականությամբ, արդյունք էին հարևան հել-

³⁷ **Յ.Ն.Շուպենկո**, Черкыи мезаловской народонаі обрэдностн, Кашане, 1959, с. 38; **Г.К.Завороц**, Верования и обычаи великорусов Владимирской губернии, СПб., 3-4, М., 1914, с. 97; **В.Хоружий**, К вопросу о почитании огня, СЗ, 3-4, 1906, М., 1907, с. 159.

³⁸ **Հոմերոս**, Գիսկայան (թարգմ. Ա.Վրկաշարյանի), եր. 1957, էջ 146: Լուկի՝ «Իլիական» (թարգմ. Հ.Ֆանդրուձյանի), եր., 1955, էջ 146.

³⁹ **Lucian**, Charon, 22.

⁴⁰ Հունաստանում այն կապվում էր քարման հետ, համարվում էր ամեն ինչ սկզբը և ծառայում էր որպես մաքրարժեղող գործիքություն:

⁴¹ **С.В.Тер-Аветисян**, Курганы Хасан Калы ("Известия Кавказского историко-археологического института", Т. IV, Тифлис, 1926, с. 80.

լենիստական երկրների հետ ունեցած սերտ կապերի ու փոխազդեցությունների:

Կպել սարկոֆագը տեղավորված էր արևելյան պատի երկայնքով՝ ուղղակի սպասատակի վրա: Այն պատրաստված է խոշորատակի կարմիր կավից՝ լավ չքրծած քույս միջուկով, մակերեսը պատած է դեղնավուն անգորով, փայլեցած: Իրանը հարողովված է տարբեր հեռավորության վրա տեղադրված, պարսաան երեք ուսուցիկ գոտիներով: Հորիզոնական կտրած քաակի եզրերը վնասված են, հավանաբար դրան ուղիքածորի փորը չափերի կամ էլ ծանր կախարհիվ ծածկելու պատճառով:

Սարկոֆագներում քաղելու սովորույթը գալիս է ուրարտական ժամանակներից: Քարե սարկոֆագներ գտնվել են Արզիշտիիկիմիդում, Ալթին-քեփեում⁴² Օշականում հայտնաբերված կպել սարկոֆագի (երկ.՝ 114սմ, լայն.՝ 56սմ, խոր.՝ 26սմ) մի կողմը լայն է, մյուսը նեղ և ունի եռանկյունաձև տեսք: Այն բաժանված է եղել մասերի և դրվել է 27 կմախքների գլխի տակ: Թվագրվում է մ.թ.ա. VIդ. սկզբով⁴³ Մ.թ.ա. VIդ. հետո՝ մինչև մ.թ.ա. I դ. կեսերը, կավե սարկոֆագներ մեզ հայտնի չեն, թեև հելլենիստական շրջանի առ.Ֆե, հարթ ծածկով սարկոֆագներ գտնվել են Գեղարդիում⁴⁴ Սիսիանի կավե սարկոֆագն իր ձևով անցելված է Պերսեպոլիսի⁴⁵ և Նեմրուդ դաղի⁴⁶ հելլենիստական շրջանի կավե սարկոֆագներին: Այդպիսի հանդիպում են Աշուրում⁴⁷ Լայն տարածում են ունեցել և Արևելքում: Հայտնաբերվել են Դուրա-Էմրոպում⁴⁸ Տիգրիսի ափի Սելևկիայում⁴⁹ Քիչում⁵⁰ Քարելուում⁵¹ Սիքին Սևիայում⁵² Վրաստանում⁵³ Արդերբեջանում⁵⁴ և այլուր:

⁴² **Բ.Ն.Ստորոսկով**, Искусство Урарту, А., 1962, с. 24.

⁴³ **С.Севан**, **А.Калистроп**, Позднеурартское погребение Ошаканского могильника, ИФЖ, 1976, № 3, с. 269; **С.Севан**, Находки урартских изделий в Ошаканском могильнике, Древний Восток и мировая культура, М., 1941, т. 1, № 3, с. 79, 6.

⁴⁴ **Մ.Գ.Անայանյան**, Հնագիտական հայտնաբերությունները Գեղարդում, ԼՂ, 1966, № 1, էջ 83, 84, 6և. 1; **Է.Բ.Շվիդ**, Персеполь, II, Chicago, 1957, pl. 86-88; **R.Ghirshman**, Les fouilles de Susse 1946-1951, Revue des Arts, 1951, III, p. 168.

⁴⁵ **David and Joan Oates**, Nimrud 1957, The Hellenistic settlement, Iraq, vol. XX, p. 2, 1958, pl. XXVII.

⁴⁶ **Andrae W. And Lenzon H.**, Die Parthenstadt Assur, Leipzig, 1933, Taf. 43, d, h, 45, a-4, 47, h, l.

⁴⁷ **N.P.Tok**, The Necropolis, the Excavations at Dura-Europos, Preliminary Report of the Ninth season of work 1935-1936, New Haven, London, 1946, pp. 95, fig. 3-5, pl. XXVII-XXVIII.

⁴⁸ **L.Waterman**, Second Preliminary Report upon the Excavations at Tel Umar, Iraq, Ann Arbor, 1933, p. 48, pl. XVI; **Antonio Invernizzi**, The Excavations of Tell Umayr, Mesopotamia, II, 1967, Torino, fig. 11; **M.C.Cavaliero**, The Excavations at Choche "Mesopotamite", II, 1967, Torino, p. 54, f. fig. 37-42.

⁴⁹ **S.Langston**, Excavations at Kish, vol. I (1923-1924), Paris, 1924, p. 87-89, pl. XXIII, № 3.

⁵⁰ **N.P.Tok**, The Necropolis, p. 95; **E.Strommenger**, Grabfunden in Babylon, Bagdadler Mitteilungen, Band 3, 1964, Berlin, Abb. 3, 4.

⁵¹ **Գ.Ա.Գրցանյան**, Новое в изучении Дамльертских-Теле (к истории бактрийско-кузаванского городского культа), СА, № 4, М., 1971, с. 201, рис. 14.

⁵² **Н.В.Хомутинский**, Археологические исследования Урарту, Археологические находки в сел. Даблагом и в г.Угана, СА, V, 1940, с. 395 и др.

⁵³ **Փ.Ա.Օսանյու**, Бассейн рек Гекчай-Гурданчай-Ахсучай в античное время (предварительное сообщение), СА, М., 1975, с. 194, рис. 6.

ՂԱՄՔԱՐԱՆԱՅԻՆ ԻՐԵՐԻ ԿԿՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ

ԿԱՂՈՒՅՔ

Կառուցագործությունը փայտամշակության կարևոր ճյուղերից է: Հայտնի է տակավին վաղընթացիան ժամանակներից, երբ մարդը զգաց բազմոցի, բազկաթռոցների, գահավորակների կարիքը: Կառույց սկսեցին պատրաստել ոչ միայն սովորական փայտատեսակներից, այլև ընտիր ու բանվարժեք փայտից, շատ հաճախ ընդելուզած բանվարժեք և կիսաբանվարժեք մետաղե բաղադրիչներով, գարդարված զանազան քանդակներով ու գեղակերտ այլ հորինվածքներ:

Թեև գրավոր աղբյուրները հարուստ են կառույցին վերաբերող տեղեկություններով, հատկապես արքայական շքեղաշէք բազմոցների, մահիճների, գեղակերտ գահերի, գահավորակների ու բազկաթռոցների «բազմակայաների» կամ «բազմակայաների», որոնց վրա դրվում էին ասեղնագործ «բարձրեր»,⁵⁵ բայց դրանց պատկերատեսի և ձևերի մասին մենք թիչ բան գիտենք: Սակայն այս հարցում մեզ օգնության են գալիս հնագիտական նյութերը՝ իրեն բազառիկ վկայություններ տվյալ ժամանակի կառուցագործության, գեղագիտական ճաշակի և ոճական դրսևորումների ու ըմբռումների աղբյուր:

Միսիանի իշխանական դամբարանում (մ.թ.ա. 10.) պահպանված կառույցի մնացորդները բազմատեսակ են՝ պատրաստված բրոնզից, մաս առ մաս ձուլելու եղանակով, հղկված են և լավ փայլեցված: Այնուհետև առանձին տարերը հավաքել են երկաթե կենտրոնական ձողի վրա, իսկ նրանց միջև մնացած դատարկ մասերն օտարոթյունը լցրել հատուկ շաղախով: Երկաթե ձողերը միացնող դեր կատարելուց բացի, ուղեղին հաղորդել են ամրություն: Ժամանակի ընթացքում երկաթե ձողերը ժանգոտել են և պատճառ դարձել բրոնզե մասերի ճաքելուն և փլանալուն: Վերականգնությունը ցույց է տալիս, որ դրանք ունեն տարբեր տրամագծեր: Ընդհանուր առմամբ նկատելի է ուղեղի սովեղանակարների աստիճանական ներդրում, որոնց կարևոր անցումներով, երբեմն սահունորեն ներշնչում են, երբեմն էլ ուռուցիկ ձևեր ընդգրկում՝ զանգակների, օղակների, հորիզոնական առևակոսների տեսքով՝ առաջացնելով լույսի և սուլվերի ներդաշնակ խաղ: Ուղեղն իրար են ամրացվել Բ-առև բրոնզե լայնակի ձողերով

⁵⁵ С. Г. Еремич. Развитие городов и городской жизни в древней Армении, ВДИ, Москва, 1953, № 3, с. 27-31.

հարդարված ակոսավոր զարդերով (աղ. III, 1):

Երևանում հայտնաբերված կառույցի ուղեղի, ուռուցիկ մասերի տրամագծերը թիչ ավելին են և ունեն նման բարդ ձևավորում:

Սիսիանում հայտնաբերված կառույցի ուղեղի ուռուցիկ մասերը համեմատաբար փոքր տրամագծեր ունեն: Դրանք փայտե ձևավոր միջուկի վրա պատած բրոնզե թիթեղներ են, որոնց վրա պահպանված են մեխերի անցքերը: Մեզ են հասել նաև փայտե միջուկի առանձին հատվածները պատրաստված հաստոցի վրա: Վերջիններս, ամենայն հավանականությամբ, բազմոցի (բախտի, մահիճի) և բազկաթռոցի առջև դրվող ցածր արտասանների ուղեղն են:

Կառույցի արտաքին տեսքի վերաբերյալ պատկերացում են տալիս Արտաշատում, Գանձուռում և Արմավիրում հայտնաբերված կավե արձանիկները, որոնց վրա պատկերված են նման և այլ տիպի բարդ ձևավոր ուղեղերով բախտեր, բազկաթռոցներ և ցածր արտասաններ: Այդ տեսակետից առավել ուշագրավ են մոր ու մանկան կավե արձանիկները, որտեղ մայրը նստած է ձևավոր ուղեղով բարձր բազկաթռոցին, ուղեղի տակ ցածր արտասան՝ դարձյալ ձևավոր ուղեղով:⁵⁶ Որոշ օրինակների վրա արտասան կա նաև մոր ձախ կողքին կանգնած երեխայի ուղեղի տակ:⁵⁷

Բացառիկ հետաքրքրություն է ներկայացնում բարձր բախտերը նստած, մոր ու մանկան արձանիկը՝ կիսապատկած տղամարդու, երբեմն էլ քսիտի ծոտ ցածր արտոնի կանգնած սրինգ նվազող երեխայի հետ:⁵⁸ Թախտերն ունեն ձևավոր հաստ ուղեղ, որոնք վերինց ներքև նույն լայնություն ունեն: Հորիզոնական առևակոսներով ուղեղի կենտրոնական լայն գոտին հարդարված է ծաղկաշղթա զարդերով (աղ. II, 3):

Թախտին նստած կամ կիսապատկած տղամարդու պատկերով Արտաշատում և Գանձուռում⁵⁹ հայտնաբերված կավե արձանիկների վրա քախտի ուղեղը ձևավոր են, բայց առանց կենտրոնական գոտու ծաղկաշղթայի: Այսպիսով, Արտաշատից, Սիսիանի իշխանական դամբարանից և Երևանից հայտնաբերված կառույցի մնացորդները քախտի (աղ. III, 2), բազկաթռոցի (աղ. III, 3), բարձր արտոնի (աղ. III, 4) և նրանց առջև դրվող ցածր արտոնի մանրաձևեր են (աղ. III, 5): Վերջայտ է, որ կավե ամաճիների վրա պատկերված են աստվածներ և աստվածացված հերոսներ, հետևապես կասկածից վեր է, որ վերոհիշյալ հայտնագործությունները և՛ վերնախալի կողմից օգտագործվող համրիսավոր, շքեղ կառույցի մանրաձևեր են:


Յ. Ա. Բեյքերը ուսումնասիրելով կառույցի ծագումն ու զարգացումը (մ.թ.ա. 3100-475թթ.) եզրակացրել է, որ նմանական, հունական, մերձավորարևելյան կառույցի ձևերը, պատրաստման հնարները, գտնում է, որ բարդ ձևավոր ուղեղով կառույցը նախ ձևավորվել է մերձավորարևելյան

⁵⁶ Չ. Գ. Պալաջյան. Հայաստանի անտիկ շրջանի կրթության պատմություն, ԼՂՊ, 1977, № 5, ստախ II, 1. 3, 8: Մուլիկ Անտիկի դիցու էր, պատկերումը ու պատկերումը Չ. Գ. Պալաջյանի կողմից Հայաստանում և նրա աղբյուրները հեղինակության պատկերի հետ, ԳԳԻ, 1985, № 1, սուլ. I, 4, 5:

⁵⁷ Պ. Դ. Վաղարշյան. Об античном корольстве Армении, ВДИ, 1979, № 3, տաճ. I, 3: Չ. Գ. Պալաջյան. Արտաշատ II, Անտիկ դամբարանադաշտեր (1971-1977թթ. պեղումները), Երևան, 1981, տաճ. XXII:

⁵⁸ Չ. Գ. Պալաջյան. Անտիկ դիցու էր պատկերումը Հայաստանում, ԳԻ, 1. 2, Մուլիկ Հայաստանի անտիկ շրջանի կրթության պատմություն, տաճ. II, 1:

⁵⁹ Չ. Գ. Պալաջյան. Հայաստանի անտիկ շրջանի կրթության պատմություն, տաճ. II, 2:



տարածաշրջաններում, կոնկրետ՝ Միջագետքում (XIII-XII դդ.)⁶⁰ մ.թ.ա. VIII դ. բարձր արտոնքը հայտնի են Ասորեստանում (Կինվե),⁶¹ Պարսեպոլիսում⁶² արոն և քախտ՝ մ.թ.ա. VII-V դդ. (Գորդանանի բանգորան): Կահույքագործության միջագետքյան-ասորեստանյան ավանդույթները շարունակում են գոյատևել և Արևմտյան Ասիայի օրոք: Պերսեպոլիսի գանձարանի և սյունազարդ դակիոնի բարձրարժեքայիններում Դարեհ Մեծը (I), Զարթուստ I-ը պատկերված են նման, բայց ձևավոր գաիին նստած, ուղեբեր ցածր արտոնք դրո:⁶³

Երկու պատկերը նկատելի է հունգարացի գիտնական Դ.Կեիսի⁶⁴ աշխատության մեջ, որտեղ կահույքի ծագումն ու զարգացումը ավելի լայն հենքի վրա են քննարկվում: Ըստ Դ.Կեիսի՝ ասորա-բաբելոնական կահույքը հարյուրավել է բուսական և կենդանական, ինչպես նաև երկրաչափական, օղակաձև ոսկե և բրոնզե գարդապատկերներով: Պարսեպոլիսը, նվաճելով այդ երկրները, կահույքի ինքնուրույն ոճ չստեղծեցին, այլ շարունակեցին ասորա-բաբելոնյանը, սակայն, ավելի շքեղ հարդարանքով:⁶⁵ Բնբերսեցիք վերցրած հույների ավարի մասին խոսելիս Դեյրոդոտոսը (IX, 80, 82) նշում է նաև ոսկե, արծաթե, ոսկեջրած և արծաթեջրած մահիճների (թախտի) ու սեղանների մասին:

Սելևկյան դրամների վրա պատկերված թիկնակով և առանց թիկնակի գահերը հելլենիստական շրջանում կահույքի այդ տեսակի ավանդույթների շարունակության վկայությունն են:⁶⁶ Անտիոքոս II-ի և Սելևկոս II-ի Հռոմը կտրած դրամների դարձերեսին Ձևը նստած է նույնատիպ գահի վրա:⁶⁷ Ամաստիոսի՝ մ.թ.ա. 300-285թթ. թվագրվող քաղաքային դրամների դարձերեսին Ձևը կրկին պատկերված է նմանատիպ գահի վրա:⁶⁸ Զելսելիստական շրջանի արդ, ձևավոր կահույքի ուրքեր և մասեր են հայտնաբերվել Այ-Խանունում:⁶⁹ Միրհնայի կավե արձանիկների վրա պատկերված են նման ուրքերով գահավորակներ, մահիճներ և ճրանց աթև: դրված ցածր արտոնքներ:⁷⁰

Բարդ, ձևավոր ուրքերով կահույքի արքեմենյան ավանդույթները շարունակվել են Պարսեստանում: Այդ են վկայում բրոնզե բարդ, ձևավոր (զուգահեռներով և օղակներով) ուրքերի մասերի հայտնաբերումը Մասզիդ-ի Սուլեյմանի մեծ տաճարից:⁷¹ Բրոնզե ոսկեզօծ նմանատիպ ուրքերի մանրամասներ գտնվել են Համիի դամբարանում⁷² (մ.թ.ա. II դ.), որը, ինչպես ենթադրվում է, պատկերվել է շքեղ քախտի, իսկ հետագայում օգտագործվել իբրև քաղ-

ման մահիճ: Փրոսոպե շքեղ կահույքի մանրամասներ հայտնաբերվել են պարսկական Կիսայում, որոնք, ըստ վերականգնության, եղել են գահավորակի և քախտի մասեր (Գ.Ա.Պուզալեյնովան գտնում է որ դրամ-պատկերներ են Միրհայտ I-ին, մ.թ.ա. 171-138թթ.):⁷³

Միրհայտ II-ի (մ.թ.ա 123-88թթ.) դրամների դարձերեսին Արշակը պատկերված է նման բարդ մեկավոր ունեցող ուրքերով գահավորակի նստած:⁷⁴ Իսկ Զրահատ III-ից (մ.թ.ա. 70-57թթ.) սկսած՝ թագավորները մշտապես պատկերված են նման գահավորակների վրա:⁷⁵

Հռոմեացիները ընդօրինակելով հունական կահույքի կերտվածքը, դրանք հարդարել են փայտե և մետաղե գեղավերպ (պատտիկ) զարդասարքերով: Ի տարբերություն հունականի՝ հռոմեական կահույքի որոշակի տեսակները՝ արոններ, մահճակալներ ունեն բրոնզե զանգակաձև, օղակաձև և այլ քաղց հնարանի ուրքեր:⁷⁶ ենթադրվում է, որ դրանք էտրուսկներից բնորոշ տեխնիկական հնարքների ազդեցության արդյունք են: Սակայն նկատի ունենալով դրանց պատրաստման ժամանակը և այն, որ այդօրինակ ուրքերով կահույքը Արևելքում վաղուց է հայտնի, կարելի է մտածել, թե ուրքերի այդ հորինվածքը ընդօրինակվել է արևելյան կահույքից:

Անտիկ շրջանում կահույք պատրաստվում էր փայտից, քարից, մետաղից և ոսկրից: Կերտմանը կրկնում էին փայտե կահույքի ձևերը: Քարե կահույքը հանդիսավոր բնույթ ուներ և տեղադրվում էր հասարակական շենքերում ու հարուստների տներում:⁷⁷ Իրոդոսը լու է, որ VII-V դդ. Մերձավոր Արևելքի երկրներում,⁷⁸ Հունաստանում⁷⁹ և էտրուսկյան⁸⁰ կահույքի մեջ օգտագործել են մետաղե գարդեր, սակայն դրանց զանգվածային կիրառությունը լայն տարածում ստացավ միայն հելլենիստական շրջանում:⁸¹ Իսկ ուշ հելլենիստական շրջանից սկսվում է նաև մետաղե կահույքի արտադրությունը, որի վրա արտահայտությունն է Դայաստանում հայտնաբերված վերինիշյակ կահույքը: Իերոնների թագավորը՝ որպես նվեր, Պոմպեոսին ուղարկում է ոսկե մահիճ, սեղան և գահ:⁸²

Քարե և մետաղե կահույքի կիրառությունը մեծացավ հատկապես Դելոսում⁸³ և Իտալիայում,⁸⁴ հանրապետության վերջում և վաղ կայսրության շրջանում: Բայց մ.թ. I դ. ստիճանաբար նորոգած դարձավ փայտե կահույքը:⁸⁵ Պլինիոսը թվարկում է մի շարք ծա-

⁶⁰ H.S. Baker, Furniture in the ancient world. Origins, evolution 3100-475 B.C., Newyork, P. 216-217, pp. 49.

⁶¹ Լույն ստորև, էջ 224:

⁶² Լույն ստորև, նկ. 361, 362:

⁶³ Լույն ստորև, էջ 226, նկ. 365; E.E. Schmidt, Persepolis I, Chicago, 1953, pl. 77-78, 96-98, 104-111, 119-123; Памятники мирового искусства, М., 1968, стр. 291-293.

⁶⁴ D. Kees, Sittliche Weltbau, Byzanztum, 1981, с. 5-31, табл. 5, 61-75.

⁶⁵ Լույն ստորև, էջ 30, 31:

⁶⁶ H. Seyrig, Trésors du Levant Anciens et Nouveaux, II, Paris, 1973, pl. 9, 5, 1-5, 10-18, 19, 21, 22, 23 և այլուր:
⁶⁷ G. Rider, Sous les Seleucides et les Parthes. Les trouvailles monétaires et l'histoire de la ville, Paris, 1965, pl. II, 13-15.

⁶⁸ E. Babelon et Th. Reinach, Recueil, général des monnaies grecques d'Asie Mineure, T.I, Pont et Paphlagonie, Paris, 1925, pl. XVIII, 2, 4-6.

⁶⁹ H.P. Frankfort, Fouilles d'Al Khanoum, III, Mémoires de la délégation Archéologique Française en Afghanistan, T. XXVI, Paris, 1964, s. 107-116, pl. 9, pl. 124.

⁷⁰ E. Pottier et S. Reinach, La nécropole de Myrina, Paris, Thoin, 1887, vol. 2, pl. XXXIII, XXXVI, XL.

⁷¹ R. Ghirshman, Terrasses Sacrées de Bard-e Néchandeh et Masjid-e Solaiman, Mission de Susiane Mémoires de l'Institut archéologique Iran, T. XVI, vol. I, vol. II, Paris, 1976, vol. II, pl. 6, mis. 250, 259, 288, 289.

⁷² A. Stein, Old Routes of Western Iran, London, 1940, p. 141-143, pl. 10.

⁷³ Г.А. Пузальцев, Трон Митридата I из персидской Сузы, ВДИ, 1969, № 1, с. 161-171, рис. 1-9.

⁷⁴ Լույն ստորև, էջ 164, 165, նկ. 6:

⁷⁵ Լույն ստորև, նկ. 6, s. r.; Morgan De F. Manuel de numismatique Orientale, Paris, 1923-1936, նկ. 143, 3, 5-9, 13-14, էջ 141, նկ. 180-182, էջ 168-170.

⁷⁶ D. Kees, նվ. աշխ., էջ 53-56, նույնտեղ, 11, 140, 150, 152; P. Gusman, Pompei, La Villa-les moeurs-les arts, Paris, 1999, s. 117; A. de Ridder, Les bronzes antiques du Louvre, T.II, Paris, 1915, pl. 119, 3673; Richter G. Ancient Furniture. A history of Greek, Etruscan and Roman furniture, Oxford, 1926, fig. 299, 308-310.

⁷⁷ В.Д. Блаватский, Мраморный трон из Пантиклея, Советская Археология, 1957, № 2, с. 249. Durrn f. Die Baukunst der Griechen, Leipzig, 1910, s. 463.

⁷⁸ H.S. Baker, նվ. աշխ., էջ 224, նկ. 361, 362; D. Kees, նվ. աշխ., էջ 29-31:

⁷⁹ D. Kees, նվ. աշխ., էջ 46; Н.Н. Соколовский, Древнеорбитальное ремесло в античных государствах Северного Причерноморья, Москва, 1971, с. 87-89.

⁸⁰ D. Kees, նվ. աշխ., էջ 50:

⁸¹ Robinson S., Couches and beds of the Greeks, Etruscans and Romans, Chicago, 1905, p. 42, 50-51; Соколовский Н.Н., նվ. աշխ., էջ 87, 92, 112.

⁸² Пузальцев, Pompeii, Сравнительное хозяйственное, т. II, Москва, 1963 (пер. Г.А. Стравоновского).

⁸³ W. Doornik, Le mobilier de la "Délia", XVIIe Paris, 1938, s. 1-63; Flin., Nat. Hist., XXXIV, s. XXXI, 441-445.

⁸⁴ Н.Н. Соколовский, նվ. աշխ., էջ 87; М.Е. Сорокина, Ремесленники древнего Рима, А., 1968, с. 30.

⁸⁵ М.Е. Сорокина, նվ. աշխ., էջ 30-33:

ուսեսանկներ, որոնցից պարտաստում էին կահույքը.⁸⁶ Այդ ժամանակ փայտածնականության տեխնիկան այնքան էր զարգացել, որ կահույք պարտաստում էին նաև ավելի էժանագին փայտից, ապա երեսպատում քանակաբեց փայտե նրբաշերտով: Ըստ Պլինիոսի՝ Յոնոմս հյուսնը ուներ իր ահեստին անհրաժեշտ գրեթե բոլոր գործիքները.⁸⁷

Հայաստանում ևս կահույքի գյուտերը նորություն չեն: Ամենահին հայտնագործությունները վերաբերում են ութ բրոնզի շրջանի: Գտնվել են Լճաշենի դամբարաններում և համարվում են քաղանք մահիճներ.⁸⁸ Դրանք ուղղանկյունաձև մեծ քախտեր են՝ կլոր ուղեքրով և կաշեփոկե հյուսածո նստատեղերով (1.2-1.5X0.6-0.8): Նմանատիպ քախտեր հայտնի են Ցամաքաբերդի, Արթիկի,⁸⁹ Ռեդկին-լագերի⁹⁰ դամբարաններից: Ռեդկին-լագերի մահիճ ուղեքր կարճ են և քառակուսի (բարձր՝ 20սմ, երկ.՝ 1.23սմ, լայն.՝ 60սմ): Մի փոքր այլ է Օշակահի⁹¹ վաղ երկաթի դամբարանում (№ 78) հայտնաբերված բազիլաթոի ձևը: Ցածր ուղեքրը վերևում քառակուսի են, իսկ դեպի ներքև կորացնում և հաստացնում են (55-77սմ): Նստատեղը ցանցած, գործած կաշեփոկից է եղել: Ուշագրավ այս բազիլաթոը ևս համարվում է քաղանք մահիճ.⁹²

Ուրարտական կահույքը ներկայացնող նյութերն ավելի առատ են: Կարմիր բլուրում գտնվել են վաղված փայտե աթոռների մնացորդներ: Դրանք վերին և կենտրոնական մասերի բրոնզե հատվածներն են.⁹³ Խոշոր գահի բրոնզե, ոսկեզօծ ուղեքր են հայտնաբերվել Թուրան-կալենում,⁹⁴ հարդարված կենդանակերպ և այլ տիպի շքեղ քանդակներով:⁹⁵ Ուրարտական բազիլաթոների (գահերի) վերաբերյալ մեզ պատկերացում են տախի նաև Թուփրախ-կալենում և Կարմիր բլուրում գտնված ոսկե, արծաթե զարդարանքի առարկաները՝ մեդալիոններ և մահիկանս կրծքազարդ, որոնց վրա պատկերված է գահին նստած աստվածուհի:⁹⁶ Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում Սարգսի պալատի պատերը հարդարող Մուսասիրի տաճարի քայանը ներկայացնող պատկերաշարը, որտեղ քայանված քանկաբեց իրերի շարքում հանդիպում է Միսիանի գահը ինչեցնող շքեղակերտ մի գահակիրակ, որի պատվանդանի ուղեքրն աստիճանաձև բարակում են և ունեն հորիզոնական շրջանաձև օղակներ.⁹⁷

Սարգսի երկրորդ Աշոր աստծուն ուղղած իր ձոն-ճամակում, նկարագրելով Մուսասիրի տաճարից տարած քայան-ավաղը (714թ.), ինչառապում է նաև փղոսկե մահճակալի, արծաթ-ոսկեպատ մահիճի ընդելուզված զանազան քանկաբեց քարերով, սեղանի և

ևև փայտե բազիլաթոի մասին.⁹⁸

Վաղ հայկական շրջանի կահույքի գյուտեր մեզ հայտնի չեն, սակայն այդ բացը լրացնում է Բսենիտիցը՝ «Ամբասիա»-ում: Նա վկայում է, որ երբ հույները գրավեցին Տիրիքազուսի վրանը, նրա մեջ այլ իրերի բժում ավար վերցրեցին նաև «արծաթե ուղեքրով մահիճներ ու ընկալանքներ».⁹⁹ Նշված քախտերը, ամենայն հավանականությամբ, ունեցել են արժեքնայան կահույքի ձևերը և հարդարված են եղել նույն եղանակով:

Մուտաշառից, Միսիանից, Երևանից, Մրենից հայտնաբերված կահույքի մանրամասները և կալե արձանիկների կահույքի պատկերները պատկերացում են տախի մ.թ.ա. IIդ.-մ.թ. IIդ. մինչև ընկած ժամանակաշրջանի շքեղ կահույքի մասին քանի տեսակների մասին: Թիկնակով գահ, ինչպես վերը տեսանք, ուրարտական շրջանում արդեն գործածական էր: Միսիանի գահակիրակը բազիլաթոն է, իսկ Երևանիցը արձուկները հենելու հորիզոնական ձողեր չունեն: Ինչ վերաբերում է կալե արձանիկներին պատկերված գահերին, դրանք բազիլաթոներ են, սակայն պատկերների ճակատային լինելու պատճառով մանրամասները հստակ չեն, ուստի դժվար է որևէ պարզաբանում տալ դրանց կառուցվածքի վերաբերյալ:

Մովսես Խորենացին Արտաշեսի քաղանք արարողությունը նկարագրելիս նշում է, «**Դագաղթն էին, ասէ, ոսկեղէնք, գաիոյքն և անդդիւնք բեռեզայ և պատմուճանն մարմնովն՝ ոսկեքէլ. քազ կապէլի ի զուրին, և զէն ոսկով առաջի եղեայ և զգահոյիլքն շուրթ՝ որդիքն և քազմուրին ազգականացն...**».¹⁰⁰

Ազաբանգեղուրը ինչառապում է, որ Տրդատը արդուներից ոսկեքած գահակիրակներ է ուղարկում Հռիփսիմեին (IIդ.)՝ «**և անդէն յարդունուտս վաղվաղակի ոսկիպատ գահարտուս սպասարողք հանդերձ հասուցանէին առ զուրս հնճանին, ուր էին վանք նոցա արտադր քաղաքին**».¹⁰¹ Հայաստանի վերոհիշյալ գահերն իրենց ձևերով բերևս նման են սելևկյան դրամների վրա պատկերված գահերին, որոնք ավելի ցածր են և չունեն արձուկակներ, ուստի դրանց աթև ուղեքր դնելու համար ցածր աթոռակ էի դրելը.¹⁰²

Կարմիր բլուրի՝ աթոռի գալտից պարզ երևում է, որ Միսիանի տիպի բարձր աթոռները վարդո էին գործածական: Այն իր ամնիջական աղեղներն ունի Պոմպեյից և այլ վայրերից հայտնաբերված հռոմեական աթոռների ձևերի¹⁰³ հետ (մ.թ.ա. IIդ.-մ.թ. Iդ.):

Գահը, բազիլաթոնը, եթե զերազանցայան հանդիսավոր-պաշտոնական ընդունելությունների համար էր, ապա թախտը (մահիճը) կահույքի անճանաիրաժեշտ տեսակներից մեկն էր: Միսիանի թախտը, ճիշտ է, բազիլաթոնի շքեղ տեսիլ, սակայն իր շքեղությամբ զիջում է կալե արձանիկների մի խմբի վրա պատկերված քախտին: Վերջինիս ուղեքր կենտրոնական գոտին հարդարված է ծաղկաշաղախան զարդով: Թախտը տարածված էր Հին Արևելքում (Եգիպտոսում), Հունաստանում, Իտալիայում և այլուր: Այն ոչ միայն շքեղ կահույք էր, այլև օգտագործվող էր հանգստանալու, քնելու, ծաշելու, ինքույթների ժամանակ (Ար-

⁸⁶ Plin., Nat. Hist., XVI, 231-233.
⁸⁷ Լույսն տեղում է.
⁸⁸ **А.О.Минаханов** Раскопки курганов на побережье оз. Севан в 1956г., СА, 1957, № 2, с. 147.
⁸⁹ **Դ.С.Хачатурян** Материальная культура древнего Армака, Ереван, 1963, с. 23.
⁹⁰ **F.Вагнер**, Untersuchungen über die ältesten, graben- und Schatzfunde in Kaukasien, Berlin, 1885, s. 13.
⁹¹ **С.А.Севан**, **А.А.Хачатурян**, Ошакан, I, Основные результаты раскопок, 1971-1983 гг., Ереван, 1988, с. 103-104, 123, табл. СХХ-СХХ.
⁹² Լույսն տեղում է, էջ 104, ստիվո, СХVIII.
⁹³ **Б.Б.Потроховский**, Искусство Урарту VIII-VIII вв. до н.э., А., 1962, с. 54, рис. 25.
⁹⁴ Լույսն տեղում է, էջ 44.
⁹⁵ Լույսն տեղում է, էջ 45-54, նկ. 11-14:
⁹⁶ **Б.Б.Потроховский**, Искусство Урарту, էջ 84-85, նկ. 48-50:
⁹⁷ **Б.Б.Потроховский**, Искусство Урарту, նկ. 10:

⁹⁸ **И.М.Дьяконов**, Ассиро-вавилонские источники по истории Урарту, ВДИ, 1951, № 2, с. 332.
⁹⁹ **Ամբասիա** (թարգմ. Արևելքայարկի), Երևան, 1970, IV, 20, 21 (էջ 14):
¹⁰⁰ **Մովսես Խորենացի**, II, 60:
¹⁰¹ **Ազաբանգեղուր** Պատմութիւն Շարք, Երևան, 1983, § 166:
¹⁰² **Դ.Ա.Կրայնովսկայա**, նշվ. աշխ., նկ. 6 և 7, 8.
¹⁰³ **Д.Кес** նշվ. աշխ., նկ. 140, 150:

տաշատի կամ արձանիկներից մեկի վրա, կիսապտակած տրամադրու ձեռքին կանքարոս կա): Չույթերը հանգուցյալին տանքի մինչև գերեզման տանում էին մահեր կամ դիակաթի վրա, որով և բաղում էին:¹⁰⁴ Դատելով Լճաշենի, Արթիկի, Ցամաքաբերդի, Ռեկիկ-լագերի և Օշականի բաժան ձեռքի կարծիք է ենթադրել, թե այդ սովորությունը տարածված էր և Չալսաստանում: Արևմտի դամբարանում դիակիզումից հետո մոխիրը (ցրել են կալե ղազաղի մեջ, դրել քախտին: Թախտը Արևելքում օգտագործվում էր նաև պետական կարևոր որոշումների ընդունելիս, կիսապտակած կամ թիկնով:¹⁰⁵

Թանգ-ի Սարվակի մ.թ. 200թ. թվագրվող պարթևական բարձրաքանդակի վրա պատկերված է բազալիտը՝ դասիմենասյակը ձեռքին (իշխանության խորհրդանշանը), իր վսապների հետ, քախտին կիսապտակած:¹⁰⁶ Այս նույն սովորությունը ունենին և հույներն ու հռոմեացիները:¹⁰⁷

Ճախտին կիսապտակած դիրքով մեմուկ համար, ինչպես վկայում¹⁰⁸ են գրավոր աղբյուրներն ու Չալսաստանում հայտնաբերված կալե արձանիկների պատկերները, եղել են հատուկ ձևավորված շքեր բարձր:

որոնք իբրև հարկ են տանում արեմենյան բազալտիդրի:³²³

Բրոնզե ապարանջաններից մեկի բեկորը բավականին հաստ է և ունի շերտակյուն
կտրվածք: Չամբվածելությունից և քաջվածքի մեծությունից դատելով՝ այն ևս պետք է ոտքի
ապարանջան եղած լինի: Ենդանկյուն կտրվածքով ապարանջաններ հանդիպում են Մինգե-
չաուրում:³²⁴

Գրալներ և շերվի

Արձաթե գեղարվեստական իրերի քվին են պատկանում Միսիանի դամբարանից հայտ-
նաբերված փոքր շերվին (բառը պակասում է) ու տարբեր չափերի գրալները: Դրանք պատ-
րաստել են ծուլելու եղանակով, ապա քանդակել լրացուցիչ մշակման:

Գրալները վեցն են, որոնցից մեկն ամբողջական է (երկ.՝ 16.16, քաշը՝ 57.27գ), իսկ
մյուսները թերի են: Վերնամասում դրանցից գրալները ճկունորեն օվակաան օձված են և
ավարտվում են թռչնի գլուխներով, մեկի վրա քանդակված է օձը (աղ.VIII,ս), իսկ մյուսի վրա՝
բառի գլուխ (աղ.VIII,ս): Գլուխները զանգվածեղ են, ասանց մանրամասնորեն:³²⁵ Գրալներից
մեկի պղնձ վերին մասում քանակների հաստատում է, իսկ վրան փորագրված է ցանցան
զարդ (աղ.VIII,ս): Այն կարծես պատկանողան լինի թռչնի գլխի համար: Գրալներից հինգը
խոշոր են, զվառան բերանով (աղ.VIII,ս), մեկը՝ փոքր, շրջանակն (տր. 2.2ս (աղ.VIII,ս)), ոչ խոր
քափակով: Վերջինս ոսկեջրած է:

Արձաթե և բրոնզե տարբեր չափերի գրալներ հայտնաբերվել են Արտաշատի բլուրների
պեղումների ժամանակ: Արձաթե փոքր գրալ՝ օվակաան, քափակով (3.2x2.1սմ) և սուր պարով,
գտնվել է օրինակ Արտաշատի առաջին բլուրում (1972, 33), քվադրվում է մ.թ. I դարով:

Գրալները հանդես են գալիս մ.թ.ա. V դարում արևելամիջերկրածովյան շրջաններում:
Դրանք բոլորի պղնձն ավարտվում են կենդանակաթ քանդակներով:³²⁶ Մ.թ.ա. V դարին վե-
րաբերող բաղադրված գրալներ հայտնաբերվել են նաև Դասարակալում:³²⁷ Հելլենիստական,
հատկապես հռոմեական շրջանում գրալները ստանում են կենցաղային լայն գործածություն:

³²¹ *G.M. Kazian, G.M. Aslanov*, О двух кушанских логгербах, МКА, том II, Баку, 1951, с. 205, таб. II, рис. 9.
³²² *N.P. Talli*, Գլխ. աղ. ք. 46-47, pl. XI, том 22, LVII, том 49.
³²³ *E. Schmidt*, *Persepolis*, vol. I, Chicago, 1953, p. 272, с. 374, а. 43а, в.
³²⁴ *G.M. Kazian*, Альбом кушанских погребных Миченгура, Баку, 1960, с. 25, таб. XXXVII, 8.
³²⁵ *Ж.Хачатурян*, Художественные изделия из серебра эллинистического времени, II Междуречный симпо-
зиум по армянскому искусству, Сборник докладов, т. I, Ер., 1978, с. 240, рис. 57, 6-8.
³²⁶ *D.M. Robinson*, Excavations at Olintus. Metal and minor Miscellaneous finds, an original contribution to greek life
Balkans. Part X, The Johns Hopkins press, London, Oxford University Press, 1941, pl. 1813.
³²⁷ *D. Stronach*, Excavations at Pasargadae. Third Preliminary Report, Iran, vol. III, 1965, London, p. 33, pl. XII, а, b.

Գեղարվեստորեն ձևավորված շերվիներն ու գրալները իշխանական սեղանների շեր-
տապաթի անբաժան մասն էին: Հռոմեական շրջանում դրանք մտաչելի էին նույնիսկ ոչ հա-
րուտ ընտանիքների համար: Մեծ գրալները (կցես կամ կոցես) օգտագործվում էին ճաշելու
և այլ ուտելիքների համեսելու համար, իսկ փոքրիկ շրջանան քափակով գրալները
(*cochlear*)՝ ձվեր ու կալանորոքներ ուտելու համար:³²⁸ Դրանք կիրառվում էին և կոսմետիկա-
յում, անուշահոտ քաղաղորելի: Հելլենիստական ժամանակաշրջանի գրալի է
գտնվել Արտյոխտյան կուրգանում:³²⁹ Մ.թ. I դարի գրալներ հայտնի են Դունաստանից և Միջ-
երկրակամի արևելյան ափերից:³³⁰ Մ.թ. II-IIIդդ. արալների օգտագործումը դասում է մասա-
յական՝ կրելով որոշակի փոփոխություններ, օրինակ՝ պղնձի ձևերը: II-IIIդդ. գրալներ
հայտնի են Վրաստանից:³³¹ Արդրեջանից³³² և այլ վայրերից:

Շերվիք, մասամբ թերի՝ բառը բացակայում է (պղնձ երկ.՝ 14.5սմ), ավարտվում է այծի
գլխով (աղ.VII,ս): Ամենայն մանրամասնությամբ տրված է կենդանու պատկերը, ընդօժիված են
անցած անատոմիական մանրամասները: Թափն ազուցվող մասում պղնձ հարդարված է
արդեանան ելուստներով:³³³

Մ.թ.ա. Իդ. շերվիներ Միսիանի շերվիի նման³³⁴ գտնվել են Ալվանում (Արևմտյան Հայաս-
տան):³³⁵ Տակոք, դրանց պղնձի ծայրերը թերի են և դժվար է առել, թե ինչպիսի տեսք են
ունեցել:

Շերվիները, հավանաբար, երևան են եկել մ.թ.ա. I հազարամյակի առաջին քառորդում:
Փոյոզիական Գորդիոնից հայտնաբերված շերվիք վերաբերում է մ.թ.ա. VIIIդ. վերջերին:³³⁶
Շերվիների պղնձի քանդակներից ամենատարածվածը կարապի գլուխն է: Կարապ գարդա-
նախշը հարդի էր Արևելքում: Չձավորվել է մ.թ.ա. II հազարամյակում: Արևելքում ավանդույթ-
ների հետ այդ գարդանախշը և Միրիայից անցնում է Փոքր Ասիա և Եստրոնիա: Հռոմեական
քաղաքներում և Դունաստանում այն պղնձ հանդիպում է մ.թ.ա. VI դարում, իսկ հռոմեական
շրջանում դասում է տիրապետող:³³⁷ Ձմանզան ձևավորում ունեցող պղնձով շերվիներ
հայտնաբերվել են անտիկ աշխարհի տարբեր մասերում: Կարապի և բառի գլխով շերվիներ
հանսան են հանդիպում Հյուսիսեթնոսկավյան դամբարաններում:³³⁸ Կարապի գլխով զար-
դարված մ.թ.ա. Vդ. արձաթե և բրոնզե շերվիներ (մ.թ.ա. Vդ.) հայտնաբերվել են Շերվասիկի
մարզում,³³⁹ Արտյոխտյան կուրգանում,³⁴⁰ որոնցից մեկն ունի հունարեն արձանագրություն:

³²⁸ Эпитом тил логкек упоминается в эпитафии Марциана (XIV, 121).
³²⁹ *М.И. Максимова*, Артековский курган, А., 1979, с. 88, ք. 30.
³³⁰ *D.E. Strong*, Greek and Roman gold and silver plate, (London, 1966), fig. 32, а, b, с.
³³¹ *К.Менцбила*, Позднеантичная монеталка Грузии (по материалам монеталки первых веков нашей эры),
Изд. "Мецниერба", Тбилиси, 1976, с. 71-72, таб. 25: *А.Бочко*, Исследование Нахскийской археологическо-
го экспедиции Миченского района, Поляны археологические исследования в 1976г. (краткие сообщения),
"Мецниерба", Тб., 1979, с. 45; Умшлг, Археологические раскопки в Агаши и Дзалици, Тб., 1981, с. 88, таб. 30,
XXVI, 2.
³³² *М.Аслюнов*, Т.И. Голубкина, Ш.Г.Самгушва, Каталог золотых и серебряных предметов из археологичес-
ких раскопок Абхазиджана, Изд. АН АЗССР, Баку, 1966, с. 44, 45, таб. XIII, ք. 3.
³³³ *Ж.Хачатурян*, Գլխ. աղ. ք. 241, Գլ. 57, 3.
³³⁴ *St. Mitchell*, *Agavan Kale, Anatolian Studies*, vol. XXII, 1973, p. 123-126, fig. 6, 7.
³³⁵ *St. Mitchell*, *Agavan Kale, Anatolian Studies*, vol. XXII, 1973, p. 123-126, fig. 6, 7.
³³⁶ *D.G. Mitten*, *Classical Bronzes Catalogue of the Metropolitan Museum, Washington*, 1975, fig. 41, а-с.
³³⁷ *D.M. Robinson*, Excavations at Olintus, part X, p. 194 Արդ մասի գրալվանդիքը ք. 194, ք. 205.
³³⁸ *М.И. Максимова*, Գլխ. աղ. ք. 88: *А.И.Мелконян*, Поселение и могильный скитский времени у села
Николаевки, М., 1976, с. 168.
³³⁹ *Н.А.Овсепян*, Археологический памятник в Приднестровье и Побужье в VIII-V веках до н. э., САИ, вып. 12-17, М,
1966, с. 63, № 218, таб. IV, 2. Античная художественная бронза, Каталог выставки, А., 1973, № 42.
³⁴⁰ *М.И. Максимова*, Գլխ. աղ. ք. 88, Գլ. 30.

«20 դրաման», գուցե շերեփի արծեքն է: Ըսն զլխով հարդարված մի շերեփ էլ հայտնի է Դնեստրովյան լիճանի ձայն ակից»³⁴¹ (հելլենիստական շրջան): Գելլենիստական և հունեական շրջանի շերեփներ հայտնի են Պրինեմայից,³⁴² Սիրիայից,³⁴³ Իրանից՝ Մաջիթ-ի Սուլեյմանի մեծ տաճարից:³⁴⁴ Բնութագրելուց ցույց է տալիս, որ շերեփաքարերն ու պղջերը ժամանակի ընթացքում ենթարկվել են փոփոխությունների: Կաղ հելլենիստական շրջանի շերեփաքարերն ավելի տափակ են, ծանծաղ, իսկ ուշ հելլենիստական և հռոմեական ժամանակաշրջաններում դրանք դառնում են կիսագնդան և ավելի խորը: Հռոմեական շրջանում և մ.թ. առաջին դարերում շերեփների պղջերն ունեն օղակաձև ակարտ,³⁴⁵ ավելի հարմար կախելու: Ուշ հելլենիստական շրջանում շերեփները պղջի և քսաի միացման հատվածում վեր բարձրացող արեղնանձև ելուստներ են ունենում:

Սիսիանի և Աշվանի շերեփները ծայրանցում են ուշ հելլենիստական շրջանի բաղաձուլու, կարասպազուկու շերեփներին,³⁴⁶ որոնք, ենթադրվում է, որ սիրիական և փոքրասիական ծագում ունեն: Սիսիանի գոյաներն իրենց ձևերով չեն տարբերվում հռոմեականներից: Ամենայն հավանականությամբ, Սիսիանի շերեփն ու գալաները են սիրիական կամ փոքրասիական հանրահայտ կենտրոններից որևէ մեկի արտադրանք են և քվազրվում են մ.թ.ա. I դարի երկրորդ կեսով: Երեքսինները կենցաղում ունցել են լայն գործածություն կարասիներից հեղուկ վերցնելու համար, ծիսական արարողությունների, գոհարեությունների³⁴⁷ ժամանակ իբրև չափի միավոր: Թաղման ծիսավարի համաձայն՝ հոգեզնի գինին բերվել է երկաթաքանի կարասներով, ապա բրոնզե ու կավե շերեփներով կարասներից լցվել գավաքները: Սիսիանի շերեփն ու գալաները լրացնում, հարստացնում են անտիկ աշխարհի, ուշ հելլենիստական շրջանի գեղարվեստական մետաղի մեր հավաքածուները: Դամբարանից հայտնաբերվել են նաև արծաթե քիթերով պատած մի քանի բեկորներ, որոնց ինչ լինելը դժվար է որոշել (աղ. IX, 3): Դրանցից մեկն արծաթե անոթի բեկորի ձևովոր էր կարճ՝ է՝ գծրանձ գլխիկով: Միջուկը երկաթից է, պատած արծաթե բարակ քիթերով (պսիսա, մասի բարձր.՝ 5սմ է): Նույն տեղեկայով երեք գլանանձ ձողերի մասերն ունեն հորիզոնական առակայուններ (պսիսա, մասի երկ.՝ 11.5սմ, տրամ.՝ 1.5սմ, 12.5սմ, տրամ.՝ 1.5սմ): Խնդիր պեղող բեկոր՝ հորիզոնական առակայունով, ճախողներից տարբերվում է ծայրին եղած տափակ քիթերով, որը գանձերով (պսիսանվել են անցքերը) անրազված է եղել ինչ-որ անոթի:

³⁴¹ *А.И.Меликова*, Գնվ. աշխ., էջ 168, նկ. 43, 12:

³⁴² *Theodor Wiegand* and *Hans Schrader*, Priene, Berlin, 1904, Abb. 492.

³⁴³ *G.M.A. Richter*, Catalogue of Greek Antiquities Dumfriestown castle collection, Cambridge, 1956, p. 44, pl. XIX A.

³⁴⁴ *R. Ghirshman*, avec la collaboration de Mme F. et H. Gasche, Terrasses sacrées de Bard-e Nechande et Masjid-i Solaiman, Mission du Sud-Ouest du VIII^e s. ann. ére au V^e s. de n. ère, Mémoires du la Délégation archéologique en Iran, t. XLV, L'Assan de Susiane, Paris-London, 1976, pl. 5, 2, 262.

³⁴⁵ *Евг.Прохаз*, Новые Кавказские клады. Материалы по археологии России, № 34, Пемпоград, 1914, табл. 1, 7.; *К.Мелихова*, ук. соч., с. 73, քր. 24; *R. Ghirshman*, Begram, Rechercher-archéologiques et historiques, Le Caire, 1946, pl. XVII, 16, XXVII, B.G. 242.

³⁴⁶ Նույն նույն: *A. Graefenhan*, Romischer Silber becher, Jahrbuch des Deutschen Archäologischen Instituts, Bd. 82, 1967, pl. XVII, 12; *D.E. Strong*, Գնվ. աշխ., նկ. 62, a, b; *A.de Ridder*, Les bronzes antiques du Louvre, Tome II, Paris, 1915, pl. 108, 3064, 3068, 3073; *D.G. Mitten*, Classical Bronzes, Catalogue of the Classical Collection, Washington, 1975, fig. 41 a, b, c; *S. Tassanir*, La vaisselle de bronze, romaine et Provinciale au musée des antiquités nationales, XXIX^e supplément à "Gallia", Editions du centre national de la recherche scientifique, Paris, 1975, s. 19, pl. XI, 46, 47; L'art du metal en Aquitaine des origines au VII^e Siecle Restoration et conservation Musée d'Aquitaine Bordeaux, 1980, № 154, s. *Boucher*, Գնվ. աշխ., № 374, 375.

³⁴⁷ *D.M. Robinson*, Excavation at Olinthus, Part X, p. 194.

ԲՐՈՆԶԵ ՄՊԱՍԵ

Գավաք

Սիսիանի դամբարանի եզակի գտածոներից է ձևավոր (արձառեսուն) կանթով գավաքը (մաստը բերի, բարձր.՝ 11.5սմ, պս.՝ 6.5սմ, հաս. տր.՝ 5.7սմ), պատրաստված է բրոնզե բարակ քիթերից, կտելու և ձուլելու (կանթի) եղանակով (աղ. X, 1, 2): Գավաքն ունի երկկոնձան իրան, դեպի դուրս լայնացող պսակ, հարթ հատակ, արտաքուստ զարդարված է փորագրի համաանհնորոն շրքս շրջաններով: Ուշագրավ է հատկապես արեղնանձ ուղղահայաց միացած բոնակը, որը մնալ է խաչի: Այն աղ ու ձայն գնացող քեկերով կպած է պսակին: Կանթի վերին մասը ձևավորված է դիմապատկերով՝ տեղադրված քեկի կենտրոնում: Դիմապատկերը ընդհանրացված են: Մաշվածության պատճառով դրանք աղուտ ու անորոշ են: Հազիվ նշմարվում են երկար քիթն ու աչքերը: Գլխին կպած ենինք գտոսի՞ն՝ ելուստով, քողմում է սաղավարտի տպավորություն: Ստորին մասում կանթն ձևավորված է կիսանդրիով: Քանդակը ներկայացնում է կանոնավոր դիմագծերով, կարճ մորուսով տղամարդու, որի առավելակի տակից դուրս են եկել աչիքանձ մազերը: Տղամարդու ուսերին նկատելի են հագուստի ծալքերը: Գավաքի նման մի կանթ 1983թ. հայտնաբերվել է Արձախի մայրաքաղաքի արևմտյան քաղառանի (ազարակի) վանքի շերտում:³⁴⁸ Կանթի ներքևի կիսանդրին նույնն է, ինչ որ Սիսիանին, իսկ վերինը բարձրակը մի վիզոտ քանդակում է: Երկկոնձան գավաքներ հայտնի են անտիկ աշխարհի մի շարք հնավայրերից և պահվում են տարբեր թանգարանների հավաքածուներում: Դրանք չափերով իրարից քիչ են տարբերվում: Թվազրվում են մ.թ.ա. II-III դ. և հնամարվում են իտալիկյան:³⁴⁹ Կամպանում գտնված մնամորինակ գավաքներ պահվում են Նյու Յորքի Մետրոպոլիտեն թանգարանում,³⁵⁰ Լուվրի,³⁵¹ Էրմիտաժի անտիկ բաժնում (Քուլտիլին՝ Իսե. № B. 1967 և կամանի հավաքածուներում, Իսե. № B. 565, B. 611): Նմանատիպ գավաքներ հայտնի են և մերձկուբանյան շրջաններից՝ Դայխովկայա ստանիցայից,³⁵²

³⁴⁸ *Ժ. հայադրյան*, Հայաստանում հայտնաբերված հռոմեական մետաղյա արարվածքներ, ԼՂԳ, 1984, № 10, էջ 71-73, աղ. 1, 1; *Ռ. Ս. Տրյանցև*, *Р.Ս. Կարասյան*, Արձախի 1983-1984թթ. պեղումները, ՊՊՀ, 1985, № 4, էջ 226, նկ. 7:

³⁴⁹ *H. Willers*, Neue Untersuchungen über die römische Bronzeindustrie von Carpius und von Niedergermanien, Hannover und Leipzig, 1907, s. 14, 19, Abb. 12, 4.; *H. Y. Eggers*, Der römische Import im freien Germanien, Bd. III, Hamburg, 1951, s. 123, Taf. 11, 122.; *Д.Б.Шенков*, Русские бронзовые кушаны и амфоры в восточной Европе, СА, 1983, № 4, с. 63-64, рuc. 1, 6.

³⁵⁰ *G.M.A. Richter*, Greek, Etruscan and Roman bronzes, New York, 1915, p. 195, pl. 512, 2703, 2713.

³⁵¹ *A.de Ridder*, Les bronzes antique du Louvre, t. II, Paris, 1915, pl. 98.

³⁵² *Б.С.Анн*, Серебряная чаша с рельефными изображениями и греческой надписью и стеклянная чашка из находку у станицы Даховской, "Известия Ростовского областного музея краеведения", вып. 2, Ростов-на-Дону, 1940, с. 27-29, 33 и с.л.

Կալիֆոնիայի (Վոլգոգրադի մարզ) սարմարակալ դամբարաններից:³⁵³ Ասկանյ չափերով ու կանթերի բանդակներով Սիսիանի գավաթը սերտորեն առնչվում է Կորանյան (Յուսիս-Օսեթական ԱՄՄ) դամբարաններից³⁵⁴ գտնված նմուշների հետ:

Սիսիանի գավաթը հարակից նյութերով, դրամական գտածոներով (Որդես II-ի արձաթ դրանը) թվագրվում է մ.թ.ա. IV- կեսերով, նույն ժամանակին պետք է պատկանի և արձավիդ-յան գտածոն իր կանթով:

Վերոհիշյալ զուգահեռների հիման վրա կարելի է վստահորեն ասել, որ Սիսիանի և Արմավիրի գավաթները և հարավիտալիկան ծագում ունեն և չի բացառվում, որ պատրաստված են Կասպյանում՝ գեղարվեստական մետաղի այդ հանրահայտ կենտրոնում:

Հռոմի արևելյան քաղաքակալությունը շնորհիվ մ.թ.ա. II-ի դարերում Հունաստանի, Փոքր Ասիայի, Սիրիայի և Եգիպտոսի մետաղագործական բոլոր կարևոր կենտրոնները ընդգրկվեցին հռոմեական մշակույթի ազդեցության ոլորտ: Ոչ միայն յուրացվեցին այդ կենտրոնների հաստատված ու ավանդույթները, այլև ստեղծվեցին նորերը: Այդ արհեստանոցների արտադրանքը հարմարեցվեց հռոմեացիների ճաշակին:

Հռոմեական կայսրության ժամանակաշրջանում լայնորեն տարածվեցին բրոնզե արձանիկներն ու գեղարվեստական բարձրաձաչակ կենցաղային առարկաները:³⁵⁵

Հռոմեական վարպետները, յուրացնելով հունական գեղարվեստական մետաղագործության մշակույթն տեխնիկան, հնարները, կուտակված փորձը, աստիճան գործածության տարաբնույթ առարկաները, սկսեցին հարաբերել փոքրաքանակյա պատկերներով:

Գեղարվեստական բրոնզի արտադրության գործում մ.թ. I-II դարերում առաջնությունը պատկանում էր Հայրավային Իտալիայի մետաղագործական արհեստանոցներին: Տարեմուղ հայտնի էր իր տորևտիկայով, Բրուդոլդից՝ բրոնզե հայելու արտադրանքով, իսկ Կասպոն՝ իր զարդանքի բրոնզե սպասքով, որի առկման շրջանը մ.թ. I դարն է, մինչև Դոմանի կործանումը³⁵⁶ (մ.թ. 79-ը): Հռոմեական գեղարվեստական և կենցաղային իրերի ու առարկաների արտահանումը հեռավոր երկրներ նպաստեց անտիկ ավանդույթների լայն տարածմանը: Սիսիանի գավաթը հար-հռոմեական մշակույթային սերտ կապերի արտահայտություններից մեկն է նյութական մշակույթի ապարելում: Հայաստանում հայտնաբերված իտալիկան նմուշ-գտածոների թիվն առաջին մեծ է: Դրանք եզակի օրինակներ են՝ գտնված Արտաշատում: Դրանցից է դամբարանադաշտում հայտնաբերված բրոնզե դիմաքանդակը,³⁵⁷ որն ամրացված է եղել բրոնզե վառարանի վրա: Դիմանը պատկանում է ստրուկներին շքեղազվող դիմաների թվին և քվարզվում է քիչ ավելի ուշ, քան գավաթը, օգտուոյսյան շրջանով: Այն Հայաստան է

հասել առևտրական ճանապարհով կամ հռոմեական զորքի միջոցով: Մյուսը Արտաշատի V քրից հայտնաբերված, մարդու բնական չափերից մեծ, բրոնզե արձանի մասեր են՝ ձախ աչքը, ճակատի ու քթի հատվածով, կրակի լեզվակների ձևով մշակված գլխի մագափեցներով ծածկված բերկրներ: Դրանք թվագրվում են մ.թ.ա. II-ի երկրորդ կեսով:³⁵⁸

Կարսաներ, քաներ և այլ առարկաներ

Սիսիանի դամբարանից բրոնզե անոթները Հայաստանի հիելենիստական շրջանի եզակի գտածոներից են: Դրանցից մեկը ոչ մեծ չափերի կարսա է՝ քիչ սեղմված գնդաձև իրանով, երկաթե, գրեթե օղան, երկու ընթակով (բարձր.՝ 24.4սմ, ուտուրի մասի լայնությունը՝ 27սմ, պակի տրամ.՝ 16սմ, բռնակի հաստ.՝ 1սմ, օդի տրամ.՝ 2.2սմ): Դասելով կլոր հատակի և օղան կամքերից՝ կարսան ունեցել է օղաների մեծ մտնող ծայրերով (կենդանակերպ) կիսակլոր բարձր բռնակներ (աղ. X, 4), ինչպես ուրարտական և ասորեստանյան (մ.թ.ա. VIII-VIIդդ.) արձաթե և բրոնզե դուլները:³⁵⁹ Կարսայի քիթերը բավականին բարակ է և սեղմելիս փոսիկներ են առաջացել: Նմանատիպ պղնձե մի կարսա հայտնի է Կուրանցի, Մայլուպից 22կմ հեռավորության վրա բացված Կուրիայի կուրանցից:³⁶⁰ Այն ևս ունի վզին ամրացված օղաներ: Սիսիանի կարսան կամքերով մնամ է Կերուսի հայտնաբերված (մ.թ. IIIդ.) արձաթե գեղակերտ կարսային: Այն ունի բարձր կիսակլոր բռնակ:³⁶¹

Բրոնզե երկրորդ անոթը ուղղախայսյա պատրուով, հարթ հատակով թաս է (բարձր. 8.5սմ, պակի տրամ.՝ 9սմ, ուտուրից մասի լայն.՝ 17սմ, րեքանի տրամագիծը՝ 13.5սմ) (աղ. X, 7): Հայաստանից հիելենիստական շրջանի նման քաներ գտել հայտնի չեն:

Հայաստանը իբրև հնագույն պղնձագործության երկիր, հայտնի է անհիշելի ժամանակներից, մ.թ.ա. IV հազարամյակի վերջերից իբրև այրվածից բազմիցս հիշատակվել է օտար մասնագիտների կողմից: Դեռևս մ.թ.ա. III հազարամյակում, Հայաստանի պղնձն և արծաթի հանքերը հունք են մատակարարել մի կողմից Հյուսիսային Կովկասին և նրանից իրախ³⁶² ընկած երկրներին, մյուս կողմից՝ Միջագետքին:³⁶³ Հայաստանի տարածքում հայտնաբերվել են մ.թ.ա. III-II հազարամյակների պղնձե, բրոնզե մեծաքանակ առարկաներ, այդ թվում բրոնզե խոշոր կարսաներ,³⁶⁴ հարդարված մարդու, ցլի գլխի և այլ քանդակներով վահաններ,

³⁵³ *Ж. Д. Кавтаниш*. Новые памятники античного искусства из Армавира, ВОН, 1996, № 1, с. 116, рис. 2, 3.

³⁵⁴ Edited by Rivka Meshav, Urartu a metalworking center in the first millennium B.C.E., Yerusalem, 1991, p. 214-220, fig. 4, 5, 19-22, 25-26.

³⁵⁵ *А. К. Гавриш*. Куражский курган, Ленинград, 1980, с. 34-35, рис. 12, 13; катал., № 15.

³⁵⁶ *В. В. Кротова*. Римские импортные изделия в восточной Европе (II в. до н.э.-V в. н.э.), М., 1970, рис. 49, САИ Д.1-27.

³⁵⁷ *Arménie. Trésors de l'Arménie ancienne de origins au IV^e siècle*, Paris, 1966, p. 12-17, № 33, 34-38, 40-55, 83-84; *А. Кавтаниш, А. Пилипосян, У. Меликян*. Среднебронзовое погребение Ошакана, "Археология, этнология, фолклористика Кавказа", Международная научная конференция. Сборник кратких содержания докладов, 2004, с. 66-71.

³⁵⁸ *Բ. Զ. Միլունց*. Հայաստանի պարձարվեստի բրոնզյան ավանդույթները, երևան, 1972, էջ 12:

³⁵⁹ *Б. В. Покровский*. Искусство Урарту VIII-VIII вв. до н.э., Ленинград, 1962, с. 56-63, рис. 32-37; Urartu, a metalworking, center in the First Millennium W.C.E., Edited by Rivka Meshav, Yerusalem, 1991, p. 228-236, fig. 7, 30a-b, 39.

³⁶⁰ *В. П. Шихов*. Калининский курганский могильник, МИА, № 60, Москва, 1959, с. 484, рис. 57, 3; *В. П. Шихов*. Южнокавказские сосуды бронзового могильника. Сообщения Гос. Эрмитажа, Ленинград, 1973, № 251.

³⁶¹ *Английская Художественная Бронза, Каталог выставок*, Ленинград, 1973, № 251.

³⁶² *Г. С. Уварова*. Могильники Северного Кавказа, МАК, Том VIII, 1900, с. 85, рис. 81; *В. В. Кротова*. Римские импортные изделия в Восточной Европе (II в. до н.э. - V в. н.э.), САИ, вып. Д. 1-27, М., 1970, с. 23, 94, рис. 57, 60; *М. П. Абросимова*. Памятники горных районов центрального Кавказа рубежа и первых веков нашей эры (по материалам Северных Осетии и Кабардино-Балкарии). Археологические исследования на Юге Восточной Европы, сб. ст., М., 1974, с. 16, 17, рис. III, 20, рис. XII.

³⁶³ *Английская художественная бронза*, с. 82.

³⁶⁴ *Ук. соч.*, с. 84.

³⁶⁵ *Չ. Գ. Կապարյան*. Արտաշատ II, էջ 93, տախ. 2, XXVII, 4.

սաղակարտներ, կախոյք, աշտանակներ³⁶⁵ և այլն: Մարգն II-ի՝ մ.թ.ա. 714թ. արչականրի ժամանակ Մուսասիրից տարած ավարի ցուցակում գրանցված են նաև բրոնզե բազմաթիվ առարկաներ, այդ թվում կարասներ. *“607 медных сосудов, тяжёлых и лёгких, медных купальных лоханей... 3 тяжёлых медных котла, вешущих по 50 мер воды. 1 большой котел, вешущий 80 мер воды, с большим медным ковшом к нему, который царю Урарту при жертвоприношении перед Халми напоилим жертвенным вином”*.³⁶⁶

Պղնձագործական ավանդույթները շարունակվեցին և վաղ հայկական դարաշրջանում:³⁶⁷ Գելլենիստական շրջանում պղնձագործությունը, հարստանալով դարաշրջանի նորաձուծություններով, տեխնիկական նվաճումներով և դրանք ստեղծագործաբար ներդրելով արտադրության մեջ, բարձրացավ գաղափարնա նոր աստիճանի: Կիրառության մեջ մտավ գլանման լիսեռը, որը հետագոյն թիթեղի ստացումը, լայն տարածում ստացավ խառնատի հաստոցի (դազգախի) կիրառումը: Այն վաղուց էր օգտագործվում փայտանշալության մեջ: Կատարելագործվեց նաև ծուլելու տեխնիկան: Դրա փայլուն վկայություն են երևանի և Սիսիանի դամբարանների ծակիր ուսերեղով կախույթը, ուսերե ծուլելու Սրտաշառի գիպակ կապալարը, բաճակագաղար աշտանակները, գեղարվեստական մետաղի մյուս գտածոները: Արտաշատում հայտնաբերվել է բրոնզե ուղղահայաց իրանով, հարթ հատակով, ծանծաղ փոքրաչափ քստիկ, որի դուրս լայնացող պակին ամրացված է երկարատեղ ծովաձիուկի ոճակորված արձանիկ:³⁶⁸ Ուշագրավ է նաև բրոնզե փոքրիկ ուղղանկյուն քարտանակի (առապալա), կախարչիչին բանալու անցքով,³⁶⁹ եղջերուի բրոնզե արձանիկի գլխին նստած արծվաբանդակը³⁷⁰ և այլն: Ելութերի քննարկումից ակնհայտ է, որ հայ արհեստավորներին հասու են եղել մշակման տեխնիկական և տեխնոլոգիական այն հնարները, որ կիրառել են պղնձագործները՝ կռուս, դրվագուն, ծուլելու, դրոշմում, եռակցում, դուրգանում, կորզանում մոմի կորստյան եղանակ, միակերպ, երկխելով, եռափեղով կառուցարարական մեջ ծուլելու, իղիելու, կոկելու և այլն: Դարդարման և գեղագործման գործընթացում կիրառվել են փորագրումը, ցանցախյուրը, հատիկազարդը, քանդակազարդը և այլն:

Սիսիանից հայտնաբերվել է նաև խորը, լայնաբերան բրոնզե կարասիի վերին մասը, որի պակել դեպի դուրս է լայնանում (պտակի տրամ.՝ 15սմ, պահպ. մասի բարձր.՝ 9սմ, սառելի լայն.՝ 1.5սմ) (աղ. X₃): Սիսիանի բրոնզե կարասներն ու բաւերը անտարակույս պատրաստվել են Դայաստանում:

Բրոնզե իրերի խմբին են պատկանում նաև փայտյան մեծ արկղի տապարան, կիսավոր ծխիցները կեսերը (երեք հատ, բրոնզի հաստ.՝ 0.5սմ, երկ.՝ 5սմ, լայն.՝ 9.3սմ): Դրանք վրու պահպանվել են տափտակի մասերը (հաստ.՝ 2սմ), որոնք երեսակյան գամերով ամրացվել են


ծխիցները: Երևում են ծխիցների երկու կեսն իրար միացնող երկաթե լարի մնացորդները: Ծխիցները մեզ հասած հելլենիստական շրջանի այդ կարգի միակ գտածոներն են (աղ. XI₂):

Առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում տարբեր չափերի բրոնզե զանգակները (3 հատ)՝ կախիչ օղերով: Օղերը և լեզվակները երկաթից են: Չանգակների պատերը բավականին հաստ են (աղ. XIII₂): Երեքը էլ թերի են (պահպ. մասի բարձր.՝ 6սմ, երկրորդինը՝ 8.4սմ, տրամ.՝ 6.7սմ): Բրոնզե տարբեր չափերի զանգակների գործածությունը հայտնի է տակավին հնագույն ժամանակներից, այդ թվում ուրարտական.³⁷¹ հետուրարտական: Դրանք կախվել են ձիերի վզից, օգտագործվել զանազան ծխակատարությունների ժամանակ: Պերսեպոլիսի քանդակարանակներում (մ.թ.ա. VI-Vղղ.) խորեզմու տարած ձիու վզից կախված է խշոր զանգակ:³⁷² Բ.Ա.Լիսիտսկին ազգագրական նյութերի հիման վրա նշում է զանգակների աղմուկի ճշանակությունը ծխական, կրոնական արարողությունների ժամանակ և դրանց կապը գեղերական ուժերի հետ:³⁷³ Այ-հանումում՝ որոնակարգերով տաճարում (մ.թ.ա. 240-145թթ.), հայտնաբերվել է բրոնզե չորս զանգակ:³⁷⁴

Սիսիանի դամբարանից ունենք բրոնզե երկու փոքրիկ թիակ (որոնցից մեկը՝ թերի, մյուսը՝ ամբողջական երկ.՝ 2սմ, լայն.՝ 0.8սմ (աղ. IX₃)), թիակները զլանածև կրչի տափակ մասին միանալու հատվածում զարդարված են աստակոններով: Թիակները մեծ տարածում և գործառնություն ունեն անտիկ շրջանում: Գտնվել են անտիկ աշխարհի տարբեր հատվածներում:³⁷⁵ Դայաստանում դրանք հայտնի են Արտաշատից, Գառնիից,³⁷⁶ Միսնգեյալուից³⁷⁷ և այլ վայրերից: Սիսիանի թիակներից ամբողջականը նման է Գառնիի հելլենիստական շրջանի թիակներից մեկին,³⁷⁸ իսկ թերին՝ մյուսին:³⁷⁹

Թիակները սովորաբար գործածվում էին սրվակներից և կավե փոքրիկ անոթներից քսալուրել, օժանդիք վերցնելու համար: Գառնիի 123 դամբարանի թիակը գտնվել է փոքրիկ անոթի հետ: Իսկ մ.թ. առաջին դարերում թիակները ամրանապարպ են հանդիպում:

Ենթադրվում է, որ դրանք օգտագործվել են նաև որպես բժշկական դեղորհներ (Spathomela):³⁸⁰ Ասկայան Գառնիի և Սիսիանի գտածոները մտայն են քսալուրելի հանելու համար:



³⁷¹ Uharti - A Metalworking Centr., p. 71, 86, № 20, 45: 56-61 (մ.թ.ա. VIII-Vղղ.):
³⁷² R. Ghirshman, Perse, Photo-Inventaire, Médes, Achéménides, Paris, 1963, p. 184, fig. 231.
³⁷³ S.A. Amisontsel, Древние коненники "Крыши мира", Москва, 1972, с. 69-71, маф. 24, 27, 31.
³⁷⁴ H.P. Janczyc, Fouilles d'Al Khanoum, III: Le sanctuaire du temple a riches indetées, 2 - Mémoires de la Délégation archéologique française en Afghanistan, (MDAFA), Paris, 1984, t. XXVII, pl. 2, № 19 et 17; tab. 20, 16-19; H.L. Kravtchenko, Дамбзаран, Храм Дашоурок, Москва, 1986, с. 22, 1-16, 23, 12-16.
³⁷⁵ Gladys R. Davidson, Corinth, vol. XII, The minor objects, Princeton, 1952, pl. 83, № 1350, 1351, 1355, 1356
³⁷⁶ Гарни, V, с. 101-102, рис. 12, 39, маф. XX.
³⁷⁷ E.H. Гумель, Археологические очерки, Баку, 1940, с. 159, фиг. 5, 15.
³⁷⁸ Гарни, V, № 12.
³⁷⁹ Гарни, V, № 11.
³⁸⁰ С.М. Финюганов, Античные медицинские инструменты, СА, № 1, 1967, с. 152, рис. 2, 132.

³⁶⁵ E.Б. Липотенков, Ванское царство (Урарту), М., 1959, с. 164-181, рис. 26-44; Լուսիկ, Искуство Урарты, С. 66-72, рис. 38-41.
³⁶⁶ E.Б. Липотенков, Искусство Урарты, с. 36-37.
³⁶⁷ Arménie, № 152-159.
³⁶⁸ Zores D.Khachatrian, Artaxata capitale dell' Armenia antica (Il sec. A.C.-IV sec. D.C.), Ai Piedi dell' Ararat Artaxata E l'Armenia Elenistico Romana, a cure di Antonio Invernizzi, Torino, 1998, Fig. 75.
³⁶⁹ Լուսիկ տեղում, № 4.
³⁷⁰ ժ.Գ. Խաչատրյան, Արծի տարբեր հորինվածքներով կերպարվածներ, գեաներ և քանդակներ, ՊՊՐ, 2003, № 2, աղ. II-1, 11, 12.

ԽՆՑԵՆԵՆ

Տեղադրված են դամբարանի ներսում և արտաքուստ՝ դամբանախցի վրա: Դրանք միջին մեծության, ձգված իրանով, հարթաստակ, բերանի հատվածում դեպի դուրս (այնացող պատկով կարասի բեկորներ են, գնդաձև իրանով ջրամաններ (երկուսը), ջնարակապատ տափաշիշը (կրկին երկուսը) քառանկյուն կտրվածքով ջրակ և այլն:

Ջրամաններն ու տափաշիշից մեկը ընկած են եղել ծխական կրակի մեջ, որից մասամբ այրվել են, մրուսվել, ստացել թուխ գույն (աղ. XII, 1, 2), մասնակիորեն ձևափոխվել (տափաշիշը և ծրագը): Թե՛ս կրակից խաթարվել են ու արդուներում կարասի բեկորներն իրար լավ չեն կապու:

Ուշագրավ են ջնարակապատ տափաշիշը (բարձր.՝ 14,7-14, 4 սմ): Պատրաստված են դեղնավուն մանրահատիկ կավից, ձեռածեփ: Երկու կեսերը առանձին-առանձին օձեփելուց հետո, ներքևված ժապավենով միացրել են իրար. ապա տեղադրել վիզը (աղ. XII, 3, 5): Անոթներից մեկի վիզը գլանաձև է, դեպի դուրս (այնացող ներքևված պատկով (տր.՝ 4 սմ), իրանը՝ երկու կողմից ուռուցիկ: Ունեկերը նեղ են կպած իրանին, ջնարակը՝ խամրած երկնագույն, տեղ-տեղ թափված: Ուռուցիկ կողերը հարդարված են ակոսավոր գոտիներով: Մյուս տափաշիշը ունի միակողմանի ուռուցիկ իրան, կենտրոնում՝ զույգ-զույգ համակենտրոն ակոսավոր շրջաններ, շեփոհաձև վիզ, լայն կանթը ուսերի վրա: Ջնարակը կանաչավուն, հաստ շերտով, համաչափ:³⁶¹ Հայաստանում հայտնի են Արտաշատից, Արմավիրից և այլ վայրերից:³⁶² Դրանցից ամենախոշորն ու ուշագրավը Արտաշատի առաջին բլուրում գտնվածն է (բարձր.՝ 24 սմ): Իսկ չորրորդ բլուրում գտնված տափաշիշը (բեկորային) պատրաստված է տեղական դարչնագույն կավից, մոխրագույն ջնարակապատ հենքով, մկարագրված կապուսկանաչավուն ջնարակն գոլորչի ժապավեններով:

Ջնարակած տափաշիշի հիանալի մի օրինակ հայտնաբերվել է Արտաշատի VIII բլրում (19մ/քառ. 1980թ. հորից): Այն օվալաձև տեսք ունի, իսկ սեղմված կողերին՝ կենցաղ ծառի ելելիք պատկերներ (չորս): Պատրաստված է կարապարի մեջ սեղմվու եղանակով:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ջնարակած խեցեղենի արտադրությունը Հայաստանում սկսվել է մ.թ.ա. II դարում և լայն տարածում ստացել մ.թ.ա. I - մ.թ. II դդ., կապված Հայաստանում ամպակեգործության զարգացման հետ: Հայաստանից գտնված ջնարակած խեցեղենը առավելապես կրկնում է տեղական ոչ ջնարակապատ անոթների ձևերը,

պատրաստված է կրկին տեղական դարչնագույն և դեղնավուն, ավազավառն կավից: Չնայած առաջավորասիական կենտրոնների ջնարակած խեցեղենին և հատուկ են գունավոր զարդերը, սակայն Արտաշատի ջնարակած խեցեղենի գունազեղ զարդերը առավել տիպական են տեղական խեցեղենին, հատկապես շրջանաձև զարդերը: Արտաշատը Հայաստանի անտիկ շրջանի ջնարակապատ լավագույն խեցեղենի արտադրության խոշոր կենտրոններից մեկն էր:

Ջնարակած տափաշիշը հայտնի են Առաջավոր Ասիայի շատ հնավայրերից:³⁶³ Դրանք տարբեր չափերի են (5,8 սմ-ից մինչև 29սմ) և ունեն հավասարապես սեղմված կամ միակողմանի ուռուցիկ կողեր:³⁶⁴ Միսիանի տափաշիշերն իրենց ձևերով ավելի շատ կապվում են Սելևկիայի արտադրանքին (մ.թ.ա. I դար) և կարող են ներմուծված լինել այնտեղից: Ծառայել են որպես օձանելիքի տարր:

Խեցեղեն մյուս անոթները գնդաձև իրանով, երկկանթանի, թուխ, փայլեցրած մակերեսով ջրամաններ են՝ պատրաստված սև ու սպիտակ ավազախոս կավից (մեկի բարձր. 29սմ, պս. տր.՝ 10,4սմ, մյուսինը՝ բարձր.՝ 27սմ, պս. տր.՝ 8սմ): Ունեն դուրս քեցված կտրավուն պատկեր:

Հայաստանում գնդաձև ջրամաններ հայտնաբերվել են Արմավիրում, Արտաշատում, Կաթիկ Մարտիրոս գյուղում, Դվինում³⁶⁵ և վերաբերում են մ.թ.ա. I դարի երկրորդ կեսին:

Չեղևիհիտական Հայաստանում մ.թ.ա. I դարի կեսերից երևան են գալիս գնդաձև ջրամանները, որոնք, աստիճանաբար տարածվելով, մ.թ. I դարում գործածությունից դուրս են մղում տափաշիշերը: Գնդաձև ջրամանները պատրաստվում էին դուրզի վրա, որը և հեշտացնում էր արտադրությունը:

Միսիանի գնդաձև ջրամանները դրանց վաղագույն օրինակներն են:

³⁶³ Լույս տեղում, էջ 186:

³⁶⁴ Ժ. Գ. Ռուչայրյան Արտաշատ, II, էջ 121, 122, տախ. XVI, 2:

³⁶⁵ Լույս տեղում, էջ 107, 121, նկ.42, 45, 46, 54, 58, տախ. VII, 3, VIII, 3, Գ. Գ. Ռուչայրյան. Չեղևիհիտական դարաշրջանի դամբարան Դվինում, ԳԳ, 1980, № 2, էջ 278, աղ. 1, 1:

³⁶¹ Ժ. Գ. Ռուչայրյան. Հայաստանի անտիկ շրջանի ջնարակած խեցեղենը, ԳԳ, 1977, № 3, էջ 184, 185, աղ. 1, 4, 5:

³⁶² Լույս տեղում, էջ 183-184, աղ. 1-3:

ԱՊՈՎԿԵ ՄՈՐԱԿԱ

XX դարի երկրորդ կեսին ծավալված պեղումների շնորհիվ զգալիորեն հարստացան մեր գիտելիքները Հայաստանի մինչևիվենիտական շրջանի ապակու մասին: Թեև դրանք էլ հայտ գալիս են ուլունքների մեակ, բայց և հավաստված են, որ ապակին կենցաղ է մտել մ.թ.ա. II հազարամյակի սկզբներին: Մեծամորում բացված վառարաններում հայտնաբերվել են կապտա-կանաչավուն ջնարակով ուլունքներ՝ տեղական արտադրության նշաններով:³⁶⁶ Ապակին հայտնի էր և ուրարտական շրջանում: Կարմիր բլուրում (Թեշեբանի) հայտնաբերվել են ոչ միայն ապակե ուլունքներ,³⁶⁷ այլև կամայի իրան պատկերող սրվակի վերին մաս և պարաստորոն վիզ:³⁶⁸ Բորոնք թվագրվում են մ.թ.ա. VII դարով: Վերջին երկուսը պատրաստված են ավազե միջուկի վրա, փափուկ ապակե ճածուկի թելերը փարսեղելու հնարքով և նույն կերպ էլ հրադրված էին այլ գույնի ապակե թելերով (աղ. XIX. 1):

Պատրաստի առարկաների ամրաքա մակերեսը հիվելու նպատակով դրանք գլուրում էին մարմարե սալի վրա: Այս թելերները ներմուծված են Հողոդոսից, իսկ Հողոդոսը գտնվում էր առևտրական բանուկ ճանապարհների կենտրոնում: Ձքաղվում էր ոչ միայն ծովալից, այլև ցամաքային առևտրով: Ձնարակած խեցեղենին և ապակու արտադրության կարևորագույն կենտրոններից էր:³⁶⁹ Ապակե ուլունքները, ապակու բաղադրությանը նման են միջերկրածովյան և միջագետքյան ապակուին:³⁷⁰

Ապակե կնիքներ և ուլունքներ հայտնի են նաև Հայաստանի մ.թ.ա. VI-IV դդ. հուշարձաններից: Դրանք մի մասը տեղական է: Արմավիրում VI-IV դդ. շերտերում, մակերեսից 1.50մ խորության վրա, գտնվել է «փյունիկյան»³⁷¹ նիստավոր սրվակի կեսը (բարձր.՝ 3.9սմ, հատակի տրամ.՝ 1.5սմ): Անորք պատրաստված է կալե և ավազե միջուկի օգնությամբ: Սև գույնի է, վրան՝ բաց կապտավուն փետրան գաղտեր: Թվագրվում է մ.թ.ա. V-IV դդ. և գործածվել է ծաղիկ պահելու համար:³⁹²

Չվլենիտական շրջանում ապակեգործության արտադրական պատկերը փոխվում է:

Լոր թափ ստացած առտրի պայմաններում առաջ եկան տարաների մի շարք նոր ձևեր՝ տարբեր զարդարանքներով: Մ.թ.ա. VI-IV դարերի զիզգազան, կամարան, ծաղկաշրթանան, ալիքանա գաղտեաները փոխարինվեցին հինմակամուն փետրածով, որն առավելապես բնորոշ է մ.թ.ա. II-1 դարերի պարաստորներին:³⁹³ Ապակու զանգվածային արտադրություն է կազմակերպվում տեղում: Բարձրամուն է ապակու որակը, ավելանում են քանակը և մտա-կանին:³⁹⁴

Միսիանի դամբարանի ապակե միակ անորք «փյունիկյան» անրոզական սրվակ է: Այն երկկոնան է, ներքևի կեսն ավելի կարծ, իսկ վերին մասը, աստիճանաբար նեղանալով, արևադարձ է դուրս լայնացող ու ներս ծավղող ակուտաբար պակով:³⁹⁵ Պատրաստված է կալե-ավազե միջուկի օգնությամբ (sand core), կապույտ ապակուց, որի վրա փափուկ վիճակում սպիտակ անթափանցիկ ապակե թելերը սերմնելու միջոցով ստացել են փետրանա, իսկ վզին ու ներքին հատվածում պատուսպանն գաղտեր: Ուսին ունի երկու խուլ կամբ: Շտապել է իբրև օժանդակի տարա (բարձր.՝ 11սմ, պակի տրամ.՝ 2.6սմ): Նմանառիպ անրոզական մի սրվակ հայտնաբերվել է Ալիտակի շրջանի Գեմախի գյուղում, կարասային բարդույն: Սրվակն ունի ոչ միայն նույն ձևն ու զարդերը, այլև միևնույն չափերը: Հրազդանի շրջանի Մեղրամոր գյուղից պատահաբար հայտնաբերված սրվակի (ներքին մասը թերի է) իրանք թիչ գլանանա է, իսկ փետրան գաղտերը դեղնավուն թելերից են: Արտաշատի VIII բլրից³⁹⁶ հայտնաբերված սրվակների բեկորների զարդերը սպիտակ ճածուկից են: Դրանք իրենց մեակ և ապակու գույնով նման են Միսիանի պարաստորին: «Փյունիկյան» անրոզների բեկորներ հայտնաբերվել են Օշակամուն և Մոխրաբլուրում (Բջմիածնի շրջան): Վերջինս մուգ կանաչ ապակուց է, վրան դեղին և սպիտակ միմյանց հաջորդող թելերով ալիքանա նեղ ժապավեններ և ծաղկաշրթան են արված:³⁹⁷

«Փյունիկյան» կոչված սրվակները անտիկ ապակու ամենատարածված օրինակներից են: Այդպիսիք մեծ քանակությամբ հայտնաբերվել են Կրաստամուն³⁹⁸ (մ.թ.ա. III դ.) և անտիկ աշխարհի տարբեր մասերում: Դրանք պարաստորներ են, արիպուսներ, ամֆորիսներ, սպիրիտներ և այլն, որոնք հարադրված են տարբեր գույների ապակիներով: Գործածվել են իբրև օժանդակի սրվակներ և անարվուն են Սիրիա-Փյունիկիայի, Եգիպտոսի, Հունաստանի ապակեգործական կենտրոնների արտադրանք:³⁹⁹

Մեղրամորի սրվակը ավելի գլանանա, թիչ ուռուցիկ իրան ունի, իսկ Միսիանինը և Ալի-տակինը աստիճանաբար դեպի ներքև լայնանում են և կոնան իջնում դեպի հատակը: Երկու

³⁶⁶ *G.A.Eisen*, Glass, New York, 1927, pl. 5; *D.B.Harden*, Ancient glass, I, Pre-Roman. The archaeological journal, vol. XXV, 1969, fig. 3, pl. IV c-g.

³⁶⁷ *Ж.Кюмюрджян*, Стеклоделие в древней Армении (II-I века до нашей эры), ИФЖ, 1975, № 1, с. 248-258.

³⁶⁸ Լույսն ստեղծում էր 248, 64: 1:

³⁶⁹ *Ж.Кюмюрджян*, ԵՂՎ, աշխ. էր 249, աղ. I, 6, 7: 10:

³⁷⁰ *Չ.Արշալույս, Չ.Արշալույս, Գ.Արարատյան, Գ.Բյուրաշյան, Գ.Օհանյան*, Հայաստանյան կենտրոնի 1977-1978թթ. քաղաքային հիստորիական աշխատանքները, ԲԳՄ, 1979, № 2, էր 209-210:

³⁷¹ *М.Сорокина*, Стеклоплавильная печь из Теушиса, "Мадрид", Восточная Азия, Гр.СССР, Серия истории, археологии, этнографии и истории искусств, № 4, 1974, с. 164-166, табл. I, 4, II.

³⁷² *Н.П.Сорокина*, Новые находки стеклянных сосудов Vв. до н.э. на Таманском полуострове, История и культура восточного Европы по археологическим данным, Москва, 1971, с. 76-88; *Dan Barag, R.J.Forbes*, Studies in Ancient Technology, vol. V, Leiden, 1967, p. 111 և հս. *P.Fossing*, Glass vessels before glass-blowing, Copenhagen, 1946, p. 110-112, fig. 84-85; *Ж.Кюмюрджян*, ук. соч., с. 248-251.

³⁶⁶ *Է.Առնոլդյան, Կ.Արարատյան, Բ.Փարսյան*, Մեծամոր, երևան, 1973, էր 71-73:

³⁶⁷ *Բ.Ն.Արարատյան*, Կարմիր Բլուր, Ս. Երևան, 1962, ս. 61, տաճ. II, 10, 11:

³⁶⁸ *Ք.Մ.Ջանուզյան*, Օ տրեք образцах стекла из Кармий Бура, СА, 1964, № 1, с. 307-311.

³⁶⁹ *Ք.Մ.Ջանուզյան*, ԵՂՎ, աշխ. էր 309:

³⁷⁰ Լույսն ստեղծում էր 311:

³⁷¹ *Չ.Ա.Տրիպույան, Ք.Ա.Շարապետյան*, Արմավիրի 1987-1988թթ. պեղումները, ԼՂՁ, 1991, № 6, էր 157, 64, 2:

³⁷² *И.П.Сорокина*, Новые находки стеклянных сосудов Vв. до н.э. на Таманском полуострове, История и культура восточного Европы по археологическим данным, Москва, 1971, с. 76-88; *Dan Barag, R.J.Forbes*, Studies in Ancient Technology, vol. V, Leiden, 1967, p. 111 և հս. *P.Fossing*, Glass vessels before glass-blowing, Copenhagen, 1946, p. 110-112, fig. 84-85; *Ж.Кюмюрджян*, ук. соч., с. 248-251.

օգտագործվել են նաև պաշտամունքային արարողությունների ժամանակ: Դրվել են պաշտամունքային անկյուններում: Այդ են փաստում Այ համունի տաճարում հայտնաբերված գրահիտն ոչ խորը քաները, որոնք թեև չըջանաձև են, բայց Սիսիանի անոթի նման ցածր ուղեքր ունեն և հորիզոնական կտրած պատվերներ:⁴¹⁵ Քառանկյուն անոթներ, զարդատուփեր և կաճափիչներ են գտնվել Արմավիրում, Արտաշատում, Եղեգնաձորի Մալիչկա գյուղում պատահաբար բացված դամբարանում (Երկ.՝ 10.6սմ, լայն.՝ 5.2սմ, հաստ.՝ 0.8սմ): Վերջինս տաճակ կաճափիչ է. վրան՝ շփումից առաջացած ձվաձև փոսիկ (ՊՊԳ, 26031): Կապտավուն օձաքարեղով մշակած բարակապատ կաճափիչի մի կես է գտնվել է Արմավիրում: Այն ունի թեք կտրած եզրեր, մի կողմի վրա անցք՝ զարդատուփին ազուցելու, հորիզոնական պտտվելու համար:

Դեղնաքրի կերտվածք ունի Արտաշատի B համալիրում հայտնաբերված թուխ պորֆիրոտն քառակուսի զարդատուփը (աղ.Պ.1, 4) (չափերը՝ ճճսմ, բարձր.՝ 2սմ), հարթ շուրթով: Ներքուստ եզրին ունի կլորավուն ելուստ, մեջը՝ անցք՝ հորիզոնական շարժվող կաճափիչն ազուցելու համար: Սակերեւը ներքին և դրսից ողորկ է: Ճիշտ մնան մի զարդատուփ, բայց սպիտակ կավճաքարից, հայտնի է Սինգեղաուրի կարասային թաղումից: Կաճափիչն ամրացնելու անցք չունի: Դեղինակին տուփի նշանակությունը (ինչ լինելը) հայտնի չէ:⁴¹¹

Բազմառեսակ քարերի երկիր Դայաստանում քարագործությունը կամ քարամշակությունը զարգացել է վաղագույն ժամանակներից: Քարամշակության մեջ և աշխատանքի բաժանումը կատարվել է շատ վաղ ժամանակներից, Ուրարտուից ոչ ուշ: Քարտաշենը օրավոր մեծ պահանջարկ վայելող շինարարության համար քարեր էին մշակում, իսկ քարն կենցաղային իրեր, կիրառական արվեստի տարրեր, առարկաներ պատրաստող վարպետների խումբն առանձին էր: Տեղաբնիկ վարպետներն օգտագործել են բոլոր այն քարատեսակները, որոնք եղել են տվյալ տարածքում: Դայաստանում հայտնաբերված քարե սկափանցները, զարդատուփերը, տարրեր չափերի քանարն ու գավաթները պատրաստվել են տեղում, տեղական հումքից:

Սիսիանի դամբարանում քարե առարկաները չորսն են: Դրանցից երկուսը գնդեր են, մնելը՝ պորֆիրոտից (տրամ.՝ 5.2սմ, քաշը՝ 117.9գ), մյուսը՝ սպիտակ քարից (տրամ.՝ 2.6սմ): Գնդանձ քարերը սովորաբար խորհրդանշուն են երկրապնդը: Երրորդը սպիտակ քարը քառանկյուն իր է, մի կողմում՝ երկթեք կտրած (Երկ.՝ 8սմ, բարձր.՝ 2.8սմ, լայն.՝ 2.6սմ): Այն մի ծայրում կախելու համար ունի հատուկ անցք: Առարկան բոլոր կողմերից մաշված է, հնարավոր է՝ գործածվել է իբրև սրաքար: Չորրորդը կլարծր քարե անիվ է՝ կենտրոնում անցք (տրամ.՝ 3.6սմ, լայն.՝ 0.8սմ):

ՉՆՔՆԵՐ

Սիսիանի դամբարանի գտածոներում զենքերն ըստ գործածության լինում են. պաշտպանական (վահաններ, զրահներ) և հարձակողական: Ստանձակի հետաքրքրություն են ներկայացնում պաշտպանական զինատեսակները՝ վահանների ուժրոնները (2 հատ) և զրահի շրջանաձև (դիակաձև) թիթեղներ (2 հատ): Ուժրոնները կոճանն են՝ պատրաստված արծաթե ունեխրած բարակ թիթեղից: Ներքևում՝ լայնացող պատի վրա ունեն անցքեր՝ վահանի կենտրոնին ազուցելու համար (քարձր.՝ 15 սմ, պատի լրբամ.՝ 20սմ, մասսանք թեղի (աղ. Պ.11, 4): Դամբարանի նյութերում ամբողջական վահաններ կան այլ բեկորներ չկան (գուցե և մեզ չեն հասել), ուստի դժվար է որոշել, թե վահանն ինչպիսի ձև է ունեցել:

Դայաստանում հայտնաբերված զինվոր պատկերող կալե արձանիկների վրա վահաններ երկարակոճ են, օվալաձև, կենտրոնում վահի վրա իջնող ելելիք գծով մակերեսը երկու մասի է բաժանված: Ասկայն կալե արձանիկների վահանների ուժրոնները կոճանն չեն:⁴¹² 163թ. Դայաստանը նվաճելու պատվին Լուկիոս Վերոսի կտրած շքարամի դարձերեսին պատկերված ծեղքերը կապած երկու հայ զինվորների գլխավերևում օաճակաճավ ալվար զենքերի շարքում կան օվալաձև վահաններ, որոնք նույնպես վերից վար ուռուցիկ մաս ունեն:⁴¹³

Կոճանն ուժրոններով վահաններ են քանակությամբ հայտնի են ուրարտական շրջանից: Սարգոն II-ի (մ.թ.ա. 714թ.) արշավանքի ժամանակ Մուսասիրից տարած ավարի մեջ իշխատակցում են և վահաններ, դրանք կուրացուցիչ փայլով, ծանր ու թեթև վահաններ են, ձևը, վայրի ցլի, գլուխ-ուժրոններով, առյուծի, հրեշի՝ կախված ննջատեսակի աջ ու ձախ կողմերում:⁴¹⁴

Սիսիանի ուժրոններ անենայն հավանականությամբ, ուրարտական վահանների նմանությամբ ամրացված են եղել շրջանաձև վահանների կենտրոնում. առայսօր մեզ հայտնի միակ եզակի օրինակներն են և լիարժեք պատկերացում են տալիս շքահանդեսային վահանների այդ տեսակի մասին:

Սկավառակներ. պատրաստված են արծաթե բարակ թիթեղից, քիչ ուռուցիկ են և երկու եզրերին՝ դեմ դիմաց, ունեն չորս գույգ անցքեր շապիկին կարելու համար (աղ.Պ.1, 4) (տրամ.՝ 9.2 սմ): Դամբարանի զրահաշապիկների վրա որևէ մնացորդ չի հայտնաբերվել: Արտաշատում և գտնվել են երկաթե թեփուկավոր զրահների բեկորներ: Սկավառակազարդ զրահները

⁴¹¹ Henri-Paul Francfort, Fouilles d' Ai Khanoum, III, Le Sanctuaire et Temple a niches indentées, 2, Les trouvailles, p. 21, pl. 12, № 2, 6, 10, 12-15, pl. 13, № 10, pl. IX, № 10.

⁴¹² С.М.Авдеев, Археологические раскопки в Мугдешауре, Альбом кушанских погребений, Ереку, 1960, с. 24, табл. XVIII, рис. 6.

⁴¹³ Ж.А. Хачатурян, Об античной корольстве Армении, В.Д.И. Москва, 1979, № 3, с. 99-101, рис. 12-13.

⁴¹⁴ Զ. Պատկյան, Դայաստանի վերաբերյալ հոնմանակն դրամներ և մեդալիոններ, Վիեննա, 1971, տախ. 27. 2.

⁴¹⁵ Б.Б. Любимовский, Искусство Урарту, с. 36-37.

հայտնի են դեռևս մ.թ.ա. III հազարամյակից.⁴¹⁵ Դրանք կաշվե կամ ամուր գործվածքից են, հարդարված մեկ կամ մի քանի սկավառակաձև թիթեղներով: Ինչ վերաբերում է թիթեղե թեփուկավոր զրահներին, ապա դրանք Հին Արևելքում, այդ թվում Հայաստանում, հանդես են գալիս մ.թ.ա. II հազարամյակի կեսերից և շարունակում են գոյատևել հետագա դարերում:⁴¹⁶

Սարգոն II-ը Մուսասիրից տարած ավարի մեջ հիշատակում է. «9 տканеу, одежда бо-жественности его, на которую наши золотые диски».⁴¹⁷ Իսկ Ռուսա II-ի բանակի մասին ասում է. «... не страшился его многочисленны панцирных воинов...»:⁴¹⁸

Սիսիանի արծաթե սկավառակը և ամրացվել է կաշվե զրահի վրա:

Արծաթե կլոր լարով օղակները տարբեր չափերի են (տրամ.՝ 4,3 սմ և 3 սմ): Դրանք կարող էին օգտագործվել հագուստը և կոշիկը ամրացնելու համար (աղ. XI, 6):

Սիսիանի դամբարանից ունենք նաև ոչ մեծ թվով հարձակողական զինատեսակներ՝ դաշույն (մեկը) (աղ. XIII, 3), նիզակ (երեքը) (աղ. XIII, 4-6), տեգ (երկուսը) (աղ. XIII, 8, 10) և նետասլաք (երեքը) (աղ. XIII, 9, 11): Բոլորն էլ երկաթից են: Հելլենիստական շրջանում զենքերը բացառապես երկաթից են: Պատրաստված են մեծ վարպետությամբ զինագործ դարբնի կողմից, կռելու, կոփելու, կտրելու և եզրերը հեսանելու եղանակով, դրանք նախորդ շրջաններից ժառանգած զինատեսակների կատարելագործված նմուշներն են՝ հելլենիստական զինատեսակներին բնորոշ առանձնահատկություններով:

Նետասլաքները երկու տիպի են՝ եռաթև (երկ.՝ 4-6 սմ, պոչով՝ 8-11 սմ, լայն.՝ 2,8-4,7 սմ) և քառանիստ: Հայաստանի անտիկ շրջանի հուշարձաններից հայտնաբերվել են մեծ թվով տարատեսակներով նետասլաքներ՝ երկթև, եռաթև և քառանիստ: Ամենատարածվածը եռաթևն է, կնշանակի այն եղել է ամենագործածականը: Արտաշատ մայրաքաղաքի միայն I բլրից հայտնաբերվել է երեք հազարից ավելի նետասլաք, որոնցից հազար յոթ հարյուրը գտնվել է հյուսիսարևմտյան փողոցում բացված դարբնոցներից⁴¹⁹: Եռաթև նետասլաքներ հայտնաբերվել են Գառնիում,⁴²⁰ Արմավիրում,⁴²¹ Այգեշատում,⁴²² Կարմիր բլուրում:⁴²³ Ընդունված կարծիք է, թե եռաթև նետասլաքները հանդես են եկել ասորեստանյան շրջանում, իսկ լայն տարածման շրջանը եղել է մ.թ.ա. II դ.⁴²⁴:

Հայաստանում երկաթե եռաթև ամենավաղ նետասլաքը հայտնաբերվել է Օշականի №

⁴¹⁵ Նշվ. աշխ., էջ 39-40:

⁴¹⁶ Նշվ. աշխ., էջ 40-47:

⁴¹⁷ *Б.Б. Пиотровский*, Искусство Урарту, с. 36.

⁴¹⁸ *И.М. Дьяконов*, Ассирио-вавилонские источники по истории Урарту, ВДИ, 1951, № 2-3, с. 235.

⁴¹⁹ *Б.Н. Аракелян*, Арташат I, Основные результаты раскопок 1970-1977 гг., Ереван, 1982, с. 30, табл. XXIX-XXX.

⁴²⁰ *Ж.Д. Хачатрян*, Гарни V, Античный некрополь (результаты раскопок 1956-1972 гг.), Ереван, 1976, табл. XX.

⁴²¹ *Г.А. Тирациян*, Культура Древней Армении VI в. до н.э. - III в.н.э., Ереван, 1988, с. 139, рис. 36.

⁴²² *Ռ.Մ. Թրքոյան, Ֆ.Բ. Տեր-Մարտիրոսով*, Ուշ հելլենիստական ժամանակաշրջանի դամբարաններ, էջմիածնի շրջանի Այգեշատ գյուղում, ՊԲՀ, 1976, № 2, էջ 2, 66, աղ. II, 6:

⁴²³ *А.А. Ваиман, Г.А. Тирациян*, Кармир-Блурский некрополь эллинистического времени, ВОН, 1974, № 8, с. 66, табл. III, 2.

⁴²⁴ *К. Doerner, Th. Goell*, Arsameia am Nymphaios, Berlin, 1964, p. 276; *Г.А. Тирациян*, Древнеармянская керамика из раскопок Армавира, ИФЖ, 1971, N 1, с. 226, табл. IV, 1, 2.

25 դամբարանում և թվագրվում է մ.թ.ա. VI դ. կեսերով:⁴²⁵ Ըստ Մովսես Խորենացու՝⁴²⁶ Հայկ Նահապետի՝ Բելի վրա արձակած նետը եղել է եռաթև. «*Ձայս իմացեալ աղեղնաւորին Հայկայ՝ յառաջ վարէ զինքն, մօտ հասանէ յառքայն, լի քարչէ զլայնալիճն, դիպեցուցանէ զերեթևեանն կրծից տախտակին, և շեշտ ընդ մէջ թիկանցն թափանցիկ լեալ՝ յերկիր հարստի սլաքն...*»: Եռաթև նետասլաքները Հայաստանում, հանդես գալով մ.թ.ա. VI դ., լայն տարածում են ստանում մ.թ.ա. II-III դդ. և հարատևում են մինչև VIII դ.⁴²⁷:

Ձենքերից մյուս երեքը փոքր չափերի նիզակների եռանկյունաձև շեղբեր են (երկ.՝ 10-12 սմ), միջնաջիղ, խողովակաձև կոթառով: Շեղբերը սահուն անցումով միաձուլված են կոթառներին: Երեք նիզակներն էլ ինչ-որ չափով թերի են: Նիզակներ հայտնաբերվել են Արտաշատում,⁴²⁸ Գառնիում,⁴²⁹ Արմավիրում,⁴³⁰ Մինգեչաուրում,⁴³¹ Կանբրքոյում,⁴³² Այ-խանումում,⁴³³ և այլ վայրերում:

Տեգերը (նետվող փոքր նիզակ) երկուսն են, ունեն ձգված տերևաձև շեղբ, խողովակաձև կոթառ, սահուն միաձուլված են շեղբին (շեղբի երկ.՝ 7 սմ, լայն.՝ 2,5 սմ, պահպանված կոթառով երկ.՝ 10,5 սմ): Նման տեգեր անտիկ հուշարձաններում հաճախ են հանդիպում (Արմավիր,⁴³⁴ Գառնի, Արտաշատ⁴³⁵ և այլն):

Դաշույնը երկսայրի է (դաստակը թերի), շեղբը վերին սայրում բավականին լայն է (5 սմ): Նեղ միջնաջիղը հասնում է մինչև կեսը (երկ.՝ 20,5 սմ): Դաշույններ հայտնի են Արտաշատից⁴³⁶, Գառնիից⁴³⁷ (I-II դդ.) և Արմավիրից⁴³⁸: Նմանօրինակ դաշույնները հազվադեպ հանդիպող զինատեսակներից են:

⁴²⁵ *С.А. Есаян, А.А. Калантарян*, Ошакан I, Основные результаты раскопок 1971-1983 гг., Ереван, 1988, с. 74-75, табл. L II, 10.

⁴²⁶ Մովսիսի Խորենացույ Պատմութիւն Հայոց (աշխատութեամբ Ս. Արեղեան եւ Ս. Յարութիւնեան), Տիփլիս, 1913, I, ԺԱ (նմանութիւն Երևան, 1991):

⁴²⁷ *Ս.Ս. Բալանթրյան*, Ձենքերը V-VIII դարերում, ՊԲՀ, 1965, N 4, էջ 242-243, աղ. I, 10, 11, 14-17, II, 1-3:

⁴²⁸ *Б.Н. Аракелян*, Арташат I, с. 30, табл. XXX1, 2.

⁴²⁹ *Б.Н. Аракелян*, Гарни II, Результаты раскопок 1951-1955 гг., Ереван, 1957, с. 45, рис. 11.

⁴³⁰ *Г.А. Тирациян*, Культура древней Армении, с. 138, рис. 35, 11.

⁴³¹ *С.М. Казиев*, Археологические раскопки в Мингичауре, Альбом кувшинных погребениу, Баку, 1960, табл. XXXV3, 4.

⁴³² *M. Mellink*, Archaeology in Asia Minor, American journal of Archaeology, 1966, № 2, p. 153; H. Alkim, Exploration in Turkey, 1965, 1966, Anatolica 11, 1968.

⁴³³ Henri-Poul Francfort, Fouilles d'ai Khanoum, III, Paris, 1984, Le Sanctuaire du Temple a niches, indentees, 2. Les trouvailles, p. 67, pl. 24, №2 (1872); XXIX, № 1089.

⁴³⁴ *Г.А. Тирациян*, Культура древней Армении, с. 139.

⁴³⁵ Арташат I, табл. XXXI.

⁴³⁶ Арташат I, с. 30, табл. XXXII.

⁴³⁷ Гарни I, с. 49, рис. 40; Гарни II, с. 45, рис 11; Гарни V, рис. 3, 4.

⁴³⁸ *Գ.Ս. Տիրացյան*, Հնագիտական աշխատանքները Արմավիրում, ԼՀԳ, № 5, նկ. 3, 6:

ԳԵՄՍԱ

Դամբարանից հայտնաբերված միակ կնիքը սարդինոնից է Գրեթե շրջանան (1.3x1.1սմ), վերին մասում ուռուցիկ, հարթ մակերեսին պատկերված է մենամարտի տեսարան (աղ.ՊԱ.8): Կենտրոնում կանգնած մարդը, որն ավելի բարձրահասակ է, ծախ ուղը առաջ դրած, լայն բացած, հենված աջ ուղեին, նիզակով հարվածում է բշեանու գլխին: Նա սորուքավոր է, մեծ թթվու և գլխին կրում է հարթ գդակ: Ըստ երևույթին, տեղացի է: Իսկ դիմացինը, որը նիզակն ուղղել է հակասակորդի փորին, ավելի կարճահասակ, սաղավարտով է, ամենայն հավանականությամբ, պարսիկ է: Ի տարբերություն նման բովանդակություն ունեցող մյուս կնիքների՝ այստեղ տեղացու փրկունքին կանգնած է երակոթ բաց, թաթով ինչ-որ կերպ բռնած աղջ: Ազատ կոմպոզիցիայով կերտած այս կերպարները հստակ են, համաչափությունները՝ մասամբ խախտված, նկատելի են որոշ մանրամասներ: Տվյալ գեմնայի զուգահեռները մեզ հայտնի չեն: Պատրաստված է «իւնա-պարսկական» գլխադիրայի ոճական առանձնահատկություններով, հմուտ վարպետի կողմից, լավատեղյակ ժամանակաշրջանի գլխադիրայի նվաճումներից:⁴³⁹ Կատարման տեխնիկայով, պատկերների վերարտադրությամբ գեմնան ավելի մոտ է մ.թ.ա. V-IVդդ. կնիքներին: Եվ դա պատահական չէ, որովհետև այդ ավանդույթները շարունակվեցին ոչ միայն հելլենիստական, այլև ուշ անտիկ դարաշրջանում:⁴⁴⁰ Հայաստանը հարևան երկրների նման գտնվում էր այդ մշակույթի ազդեցության շրջանակներում: Շարունակվեցին ոչ միայն թեմաները, ոճական առանձնահատկությունները, այլև կիրառության մեջ մնացին աքեմենյան շրջանի գլանանև և մյուս տիպի կնիքները: Դրա խտուն վկայություններից են Արտաշատում հայտնաբերված կնքադրոշմների արխիվներում պահպանված Աքեմենյան գլանանև կնիքներով դրոշմված կնքադրոշմները: Միսիանի կնիքը կարող է պատկանել մ.թ.ա. III-II դարերին, ավելի վաղ, քան դամբարանի մյուս նյութերը: Այն, հավանաբար, ազուցված է եղել վերը նկարագրված ոսկե առյուծազուլուս ավարանքանի բնում և պատկանել է քազավորական կամ իշխանական (աշխարհիկ իշխանություն խորհրդանշող) գաղապտեսակների դասին: Հեծյալի կամ հետիոտնի հարցական մենամարտը շատ տարածված թեմա էր: Թշնամուն հաղթելը պատերազմում և մենամարտում համարվում էր հեղորթյան և ուժի արտահայտություն: Արտաշատում հայտնաբերված արխիվում կան բազ-

⁴³⁹ *Մ. Դ. Այսախյան*, Դիտորություններ հայաստանի հելլենիստական գլխադիրայի մասին, ԼՂ, 1974, № 7, էջ 99, 100, նկ. 2:

⁴⁴⁰ *Zores D. Chachatrian*, Achaimenidische Traditionen im postachaimenidischen Armenien, Archäologische Mitteilungen aus Iran und Turan, and 32, Berlin, 2000, s. 43-49, Abb. 1, 2; *Ж. Д. Хачатрян*, Отражения Ахеменидских традиций в эллинистическом и позеленистическом периодах, Научные труды, вып. III, Ереван, 2000, с. 3-45.

մաքիվ նմանատիպ բովանդակության կնքադրոշմներ, այդ բնում հայկական բազով հեծյալի մենամարտը հուպիտի հետ պատկերով:⁴⁴¹ Դրտորությունը նույնպես դիտվում էր ոչ միայն որպես զվարճություն, այլև քաջություն, հերոսություն ցուցաբերելու միջոց: Մենամարտի և դրտորության դրվագներ պատկերելը հայ արվեստագետ-վարպետների հիմնական թեման էր երկար ժամանակ:

⁴⁴¹ *Zores Khachatrian*, The archives of sealings found at Artashat (Artaxata), Bulletin de correspondance hellénique, supplement 29, 1996, p. 367, fig. 5-6.

ՈՒՆՈՒՆԵՐԻ, ՄՏԱՆՈՒ ՔԱՐԵՐ ԵՎ ԱՅՆ ԱՆՈՎԿԱՆԵՐ

Սիսիանի դամբարանից հայտնաբերված գտածոներում ուշագրավ են ուլունքներն ու մատանու քարերը: Զարդարանքի ամենատարածված այդ առարկաներն աչքի են ընկնում իրենց գույների, օգտագործած նյութերի, պատրաստման տեխնիկական հնարների և ձևերի զանազանությամբ: Հեղինատական և ուշ անտիկ շրջանի դամբարանական ուլունքները զանգվածաբար հանդիպող զարդատեսակներից են: Հարկն հաստական շրջանում, ի տարբերություն երկաթի լայն տարածման և վաղ հայկական շրջանի, գերակշռում են ապակե (վամա-կատ) մածուկից և ապակուց պատրաստված ուլունքները: Դրանք իրենց ձևերով և գույներով քարե ուլունքների պարզ ընդօրինակություններն են: Հարուստ դամբարաններում հանդիպում են հիմնականում ոսկե և արծաթե ուլունքներ, Ֆալլեն գույների քարերի ու ապակեների հետ միասին: Այդ առումով Սիսիանի դամբարանը բացառություն է: Պահպանված մատանու քարերը սարդիոնից են, մեկը՝ բազմանիստ, մյուսը՝ ուռուցիկ, չորսը՝ կիսագնդաձև, սպիտակ, ոսպանձ, կարծրավուն իպերով: Ցավոք մատանիները մեզ չեն հասել:

Քարե ուլունքները սարդիոնից են, շեղանկյունաձև և զլանձև, կանաչավուն սպիտակ կետերով (աղ.XIX.,), օժաքարից՝ տակառանձ, օբեդիանից՝ բրգանձ կախիկ (աղ.XVIII.), գրաֆիտից, փոքր ձվաձև, ագաթից՝ զլանձև, լայնքով ու երկայնքով արված առևակուսներով, լեռնային բյուրեղից՝ ձվաձև (աղ.XVIII.) և այլն:

Փաստ է, որ հնում մարդը, չկարողանալով բացատրել քնուքան շատ երևույթներ, կյանքը, մահը և այլն, անբախտաբան լինելով զանազան արհամարհներից, իրեն շրջապատող իրերին և առարկաներին վերագրում էր գերբնական հատկանիշներ, դրանք գերիզոր էին: Երանց չար ուժերից պաշտպանվելու, դժբախտություններից հեռու մնալու կամ հաջողության, երջանկության հասնելու համար օգտագործում էին հնայական պահպանակներ, քալիսմաններ, հավատում դրանց և վերագրում զանազան կախարհայիններ, մոգություններ: Թանկագին և կիսաքանկագին քարերից շատերը, ըստ իրենց գույների, ձևերի և մի շարք հատկանիշների, ծառայում էին որպես հնայիններ, հուուուքք և քալիսմաններ: Քարե մատանին կամ մատանիների ակնաքարերը հանդես էին գալիս երբեմն որպես հնային կամ որպես քալիսման:

Փիրուզը ոսկերչության մեջ տակավին վաղնջական ժամանակներից լայն կիրարկում ունեցող ամենագեղեցիկ և լավագույն քարերից էր: Պարսիկներն այն կոչում էին «Ֆերուզա»-

երջանկաբեր քար: Փիրուզն ունի երկնագույն, լազուրիտի պես մաքուր և վճիտ գույն, երբեմն էլ կանաչավուն-կանաչ խճճորի գույն, որի պատճառով պարսիկներն այն մնանցեցնում էին Կովկասի, Հիմալայների ստացողաշներից հոսող լեռնային կառավորի վտակների հետ:

